Azg
armenian daily
1 ՆՈՅԵՄԲԵՐ 2002 ՈՒՐԲԱԹ 199 (2644)

Քոչարյան-Ալիեւ հանդիպում նոյեմբերի 22-ին Պրահայում

Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հերթական, 20-րդ հանդիպումը նախատեսված է նոյեմբերի 22-ին Պրահայում՝ ՆԱՏՕ-ի գագաթաժողովի շրջանակներում, լրագրողներին հայտնել է Ադրբեջանի արտգործնախարար Վ. Գուլիեւը, հաղորդում է «Դե ֆակտո» գործակալությունը: Քոչարյանի եւ Ալիեւի՝ դարաբաղյան կարգավորման առաջին հանդիպումը տեղի է ունեցել ՆԱՏՕ-ի հոբելյանական գագաթաժողովի շրջանակներում՝ 1999 թ. մայիսին Վաշինգտոնում:

Նոյեմբերի 14-ին Վիեննայում, ապա նոյեմբերի 21-ին Պրահայում դարաբաղյան կարգավորման գործընթացը կքննարկեն Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների անձնական ներկայացուցիչներ Թաթուլ Մարգարյանն ու Արազ Ազիմովը:

ՄԻՇՏ ԴԵՊԻ ՔԵՁ

Ում աշխատավարձերն են արագ բարձրանում

Կառավարությունը հաստատեց 2003 թ. բյուջեի նախագիծը

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար Վարդան Խաչատրյանի երեկ ներկայացրած 2003 թ. բյուջեի նախագծից շարային քաղաքացիներին հետաքրքրող հարցերը վերաբերում էին աշխատավարձերի բարձրացմանը: Սակայն մինչ այդ բյուջեի հիմնական ցուցանիշների մասին: Համաձայն կառավարության հաստատած նախագծի, ծախսերը կկազմեն 333,8 մլրդ դրամ, եկամուտները՝ 286,7 մլրդ դրամ: Դեֆիցիտը կկազմի մոտ 47 մլրդ դրամ: Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) աճն ակնկալվում է 7,2 տոկոս, սղաճը՝ 3 տոկոս: Նախատեսված է հարկային եւ մաքսային եկամուտների ավելացում 27 մլրդ դրամով: Այս տարի այդ եկամուտները կազմել են 194 մլրդ դրամ, 2003 թ. պետք է լինեն 220,5 մլրդ դրամ: ՀՆԱ-ի նկատմամբ հարկային մուտքերը կկազմեն 15,5 տոկոս: Առաջ անցնելով նշենք, որ 27 մլրդ դրամի հարկային եկամուտների պլանավորած աճն իսկապես լուրջ գումար է, բայց դա միայն սպասելի տնտեսությունից գանձվող գումարը չի լինելու, ինչպես հայտնեց նախարարը: Ի վերջո, տնտեսական աճը եւս ենթադրում է եկամուտների աճ բյուջեում:



Տես էջ 3

ԼՂ ՀԻՄՆԱՀԱՐՑ

Ջոն Օդոուեյը Բաքվում հանգստացրել է Հեյդար Ալիեւին

Հայաստանում ԱՄՆ դեսպան Ջոն Օդոուեյը, որ փաստահավաք առաքելությամբ հոկտեմբերի 28-30-ը Բաքվում էր, հանդիպել է նախագահ Ալիեւին: Ադրբեջանի 78-ամյա ղեկավարը մտահոգություն է հայտնել, որ 46 կոնգրեսականներ շնորհավորել են Արկադի Ղուկասյանին ԼՂՀ նախագահ վերընտրվելու առիթով, փաստորեն ճանաչելով ԼՂՀ անկախությունը: Պրն Օդոուեյը, ըստ ադրբեջանական ANS-ի, հանգստացրել է Ալիեւին, ասելով, որ ամերիկացի ժողովուրդը եւ նախագահ Ջորջ Բուշը մտադրություն չունեն ճանաչելու Լեռնային Դարաբաղի անկախությունը: «Ես անհանգստացած չեմ: Գիտեմ, որ Բուշը չի ճանաչի ԼՂ անկախությունը, բայց գիտեմ, որ Կոնգրեսը լուրջ ազդեցություն ունի ամերիկյան քաղաքականության վրա, եւ նախագահը չէր կարողանում վերացնել 907 ուղղումը, քանի դեռ Կոնգրեսը դեմ էր», ասել է Ալիեւը:

Ադրբեջանի նախագահը հաստատել է ԼՂ հակամարտությունը խաղաղ ճանապարհով լուծելու Բաքվի հետեւողականությունը՝ միաժամանակ Օդոուեյի ուշադրությունը հրավիրելով այն փաստին, որ Ադրբեջանն ավելի ծանր վիճակում է: Ալիեւը մեջբերել է Ռոբերտ Քոչարյանի խոսքերը, որ «Հայաստանը կարող է յոլա գնալ նաեւ առանց հարցը կարգավորելու»:

Ադրբեջանն ավելացնում է ռազմական բյուջեն

ԲԱՔՈՒ, 31 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: «2003 թ-ին ադրբեջանական բանակի ռազմական բյուջեն կազմելու է 683,4 միլիարդ ադրբեջանական մանաթ, որը հավասար է 139,4 միլիոն ԱՄՆ դոլարի», նշում է ANS ադրբեջանական գործակալությունը: Դա 74,8 միլիարդ մանաթով (15,2 միլիոն դոլար) ավելի է, քան 2000 թ-ի բյուջեն: «Որոշ փորձագետներ գտնում են, որ ռազմական ծախքերի նման կտրուկ ավելացման պատճառը կարող է լինել գալիք տարի ռազմական գործողությունների հնարավոր վերսկսումը», նշում է ANS-ը:

Մոսկվայում շուրջկալներ եւ ձերբակալություններ

Ռուսաստանի մայրաքաղաքի ոստիկանությունը երեկ լայնածավալ գործողություններ ձեռնարկեց Թատերական կենտրոնի ահաբեկիչների հնարավոր մեղսակիցներին գտնելու նպատակով: Մոսկվայի տարբեր վայրերում խուզարկությունները շարունակվեցին գրեթե ամբողջ օրը: Անվտանգության ուժերը շուրջկալներ կազմակերպեցին հատկապես չեչենների պատկանող կամ նրանց հաճախած վայրերում: Արդյունքում ձերբակալվեց առնվազն 30 մարդ, որոնցից մեկի մոտ հայտնաբերվեց խիստ տոքսիկ գազով լցված բալոն: Ըստ ոստիկանության, ենթական պատրաստվում էր դրանով ահաբեկչական նոր գործողություն ձեռնարկել:

ԲԵՌԼԻՆՅԱՆ ԱԶԴԱԳԻՐ

Արամ Խաչատրյանի 100-ամյակը Գերմանիայում

ԱՆԱՏԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

Նոյեմբերի 4-ին, ժամը 18.30-ին Բեռլինի Փալաս ամ Ֆեսթունգսգրաբենի Սարմարյա դահլիճում տեղի կունենա Արամ Խաչատրյանի 100-ամյակին նվիրված տոնական համերգ, այնուհետեւ՝ ընդունելություն, իրագեկում է Բեռլինի ՀՀ դեսպանությունից առաքված ճաշակով հրավիրատոմսը: ԳԴՀ եւ ՀՀ երկու առաջին տիկինների՝ Քրիստինա Ռաուի եւ Բելլա Քոչարյանի հովանավորությամբ անցկացվելիք միջոցառմանը մասնակցելու են Արամ Ղարաբեկյանի ղեկավարած Հայաստանի ազգային կամերային նվագախումբը եւ 13-ամյա դաշնակահարուհի Նարե Արղամանյանը: Ըստ ծրագրի՝ կհնչեն Սոցարտի, Բախի, Էդվարդ Հայրապետյանի, Էդվարդ Միրզոյանի եւ Արամ Խաչատրյանի ստեղծագործություններից:

Նույն օրը, ժամը 19.30-ին Բեռլինի Հեսսենյան ներկայացուցչությունում «Ռուսաստանն ու Արեւմուտքը Կովկասում. իրա՞ր հե՞տ, թե՞ իրար դեմ» թեմայով դասախոսություն կկարդա Բեռլինի գիտություն եւ քաղաքականություն հիմնադրամի (SWP) միջազգային քաղաքականության եւ անվտանգության գերմանական ինստիտուտի դոկտ. Ուվը Հալբախը, կազմակերպմամբ գերմանահայկական ընկերության:

Գերմանաբնակ հայերը ափսոսանք են հայտնում, որ երկուշաբթի օրը ձեռնարկված արժեքավոր երկու միջոցառումների միջեւ սպիտված են ընտրություն կատարել:

Բեռլինյան համերգի մասին ավելի մանրամասն՝ 5-րդ էջում:

Հայ շախմատիստների առաջին պարտությունը

Շախմատի համաշխարհային 35-րդ օլիմպիադայի 6-րդ տուրն անհաջող էր հայ շախմատիստների համար: Մեր թիմը 1,5-2,5 հաշվով զիջեց ռումինացիներին: Վլադիմիր Հակոբյանը սեւ խաղաքարերով խաղաղ դաշն կնքեց Իսրաելեսկուի հետ: Նույնպիսի ավարտ ունեցան Լպուտյան-Մարին, Վայդա-Ասրյան պարտիաները: Վերջինն ավարտվեց Մինասյան-Պարլիգրաս պարտիան, որտեղ սպիտակներով խաղացող հայ գրոսմայստերը պարտություն կրեց: Օլիմպիադայում դա Հայաստանի տղամարդկանց հավաքականի առաջին պարտությունն էր: Մեր թիմը 24 հնարավորից վաստակել է 16,5 միավոր եւ Չեխիայի հավաքականի հետ բաժանում է 4-5-րդ տեղերը: Իսկ մրցաշարը 18,5 միավորով միանձնյա գլխավորեց Ռուսաստանի հավաքականը, որն առանց իր առաջատար Գարրի Կասպարովի էլ պարզապես ջախջախեց մինչ այդ առաջին տեղում ընթացող բոսնիացի շախմատիստներին (3,5-0,5): Ռուսներից հաղթեցին Գրիշչուկը, Մորոզեւիչն ու Սվիդլերը, եւ միայն Ռուբլյովսկին թույլ տվեց մրցակցին՝ Բիսուրիչին, կես միավոր վաստակել: Ռումինացիները լեհերի հետ 17-ական միավորով բաժանում են 2-3-րդ հորիզոնականները: Ուկրաինայի, Անգլիայի եւ Բոսնիայի հավաքականներն ունեն 16-ական միավոր: Նշենք եւս 2 հետաքրքիր մրցախաղի արդյունք. Չեխիա-Հունգարիա՝ 2,5-1,5, Ուկրաինա-Անգլիա՝ 2-2:

Ի տարբերություն տղամարդկանց, այս անգամ մեր շախմատիստուհիները ուրախացրին հաջող ելույթով՝ 2-1 հաշվով պարտության մատնելով դանիացիներին: Մեր թիմին հաղթական միավորներ պարգեւեցին էլինա Դանիելյանն ու Լիլիթ Գալոյանը, իսկ ահա Գոհար Հլղաթյանը զիջեց մրցակցին: 6 տուրից հետո մեր աղջիկները վաստակել են 10,5 միավոր: Առաջատարը Վրաստանի թիմն է (15 միավոր), որը 3-0 հաշվով ջախջախեց հոլանդուհիներին: Ռուսները 2,5-0,5 հաշվով հաղթելով ԱՄՆ-ի ընտրանուն, 13,5 միավորով տեղափոխվեցին 2-րդ հորիզոնական:

ՏԱՐԵՐՔ

Ուժգին երկրաշարժ Իտալիայում

Երեկ հեսմիջօրեին ուժգին երկրաշարժը ցնցեց Հարավային Իտալիան, հատկապես Կոմոբասո շրջանը: Էպիկենտրոնում՝ Սան Ջուլիանո դի Պուլիո քաղաքն ու շրջակա բնակավայրերը բոլորից շատ զգացին երկրաշարժի գործած ավերները: Նախնական տվյալներով մահացել է 5 հոգի, որոնցից 4-ը դպրոցական երեխաներ: Դասաժամին փլվել է դպրոցը: Փլատակների տակից հաջողվել է դուրս բերել 22 երեխաների, որոնցից 6-ի վիճակը ծանր է: Մինչեւ ուշ գիշեր փրկարարները փորձում էին փլատակներից ազատել եւս 20 դպրոցականի: Շուրջ 25 հազար բնակիչ մնացել է անօթեւան: Երկրաշարժը զգացել են նաեւ Հռոմում, անգամ Նեապոլում:

Մյուս կողմից, արդեն 3-րդ օրն է Սիցիլիայում մոլեգնում է Էտնա հրաբուխը: Լավայի ուժգին ժայթքումներն ուղեկցվում են պայթյուններով ու ընդհատ շարունակվող երկրաշարժերով: Սակայն գիտնականներն ուղիղ կապ չեն տեսնում այդ երկու երկրաշարժերի միջեւ: Նրանք հակված են մտածելու, թե Միջերկրականի ամբողջ ավազանն է, որ անհանգիստ վիճակում է:

EXPO

Ամենագեղեցիկ

ցուցահանդեսը

Տպագրություն: Հրատարակություն: Գովազդ:

EXPO 2002

Նոյեմբերի 1-3

Կազմակերպիչ՝
LOGOS EXPO Center

Հեռ: 374 1 56 4218, 56 6367
Ֆաքս 374 1 564218
E-mail: logos@expo.am
http://www.expo.am

ԸՆԹԱՑԻԿ

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ

Այցելություն Տավուշի մարզ

Հոկտեմբերի 30-ին ՀՈԱԿ փոխատեղապետ Հարություն Առաքելյանը, Հանրապետական վարչության անդամ Կարեն Կակոյանը կուսակցական շինարարության նպատակով այցելել էին Տավուշի մարզ, որտեղ մի շարք հանդիպումներ ունեցան Իջևան քաղաքի, Հովք, Աչաջուր, Այգեհովիտ գյուղերի ՀՈԱԿ նույնանուն ակումբների անդամների եւ կուսակցության շարքերն ընդունվող նորագիր անդամների հետ: Նրանց մեծամասնությունը մանկավարժներ էին եւ, չնայած բոլորիս հայտնի է հատկապես մարզերի ուսուցիչների կացությունը, տեսնելով հանրապետությունում տնտեսական առաջխաղացումը, հույսով են լցված դեպի առագան: Անդամակցելով Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցությանը, ծանոթ լինելով կուսակցության պետականամետ լինելու մարտավարությանը, նորագիրներն իրենց պատրաստակամությունը հայտնեցին սեփական ներդրումն ունենալ պետության կայացման գործընթացում: Հարություն Առաքելյանի կնճահայրությամբ 33 նորագիրներ անդամակցեցին Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցությանը:

Երդման արարողությանը ներկա էր նաեւ Հանրապետական վարչության անդամ, Տավուշի ՀՈԱԿ շրջանակի ատենապետ Հովիկ Հակոբջանյանը:

Բրիտանական խորհրդարանի պատվիրակությունը կայցելի Հայաստան եւ Արցախ

Նոյեմբերի 1-7-ը Հայաստանում եւ Լեռնային Ղարաբաղում կհյուրընկալվի Մեծ Բրիտանիայի խորհրդարանի Լորդերի պալատի փոխխոսնակ բարոնուհի Քերոլայն Քոխի գլխավորած պատվիրակությունը, որի կազմում կլինեն Մեծ Բրիտանիա-Հայաստան պատգամավորական բարեկամության խմբի անդամները: Նախ պատվիրակությունը Ստեփանակերտում կհանդիպի ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանի, այլ պաշտոնատարների հետ:

Երեւանում բրիտանացի խորհրդարանականները կայցելեն Ծիծեռնակաբերդ, կհանդիպեն ՀՀ նախագահի, Ազգային ժողովի նախագահի, վարչապետի եւ պաշտոնատար այլ անձանց հետ: Բարոնուհի Քոխի գլխավորած պատվիրակությանը կընդունի Ամենայն հայոց կաթողիկոսը:

Այցի շրջանակներում բարձրաստիճան հյուրերը կլինեն նաեւ Սարդարապատի հերոսամարտին նվիրված հուշահամալիրում:

Հայ դատի գրասենյակն առարկում է Ուեքսլերի բանաձեւին

Ամերիկայի Կոնգրեսի անդամներին ուղղված նամակներով Ամերիկայի Հայ ազգային (Հայ դատի) կոմիտեն պահանջել է դեմ քվեարկել թուրքական հարցերի խմբավորման նախագահի բանաձեւին, որով փորձ է արվում պատժանքի ենթարկել Թուրքիայի ջանքերը:

«Մենք մեծապես հիասթափված ենք Ուեքսլերի ներկայացրած այս բանաձեւից: Ամերիկացի ժողովուրդն իր ընտրած ներկայացուցիչների միջոցով չպետք է հավանություն տա մի բանաձեւի, որը պաշտպանում է գինվորականների ղեկավարությամբ առաջնորդվող թուրքական կառավարությանը, որն իր հերթին մարդու իրավունքներն է խախտում իր երկրում, պահանջափակում է փոքրամասնությունների կրոնական ազատությունները, շրջափակման մեջ պահում Հայաստանն ու Լեռնային Ղարաբաղը եւ շարունակում Կիպրոսի հյուսիսային մասի գավթումը», ասել է Հայ դատի գործադիր տնօրեն Արամ Համբարյանը:

Այս առթիվ հրատարակված հաղորդագրության մեջ նշվում է, որ Ֆլորիդայից դեմոկրատ Ռոբերտ Ուեքսլերի պատրաստած բանաձեւում Թուրքիան ներկայացված է որպես Միջին Արեւելքի ժողովրդավարական «պատկառելի» երկրներից մեկը: Այնտեղ նշված են նաեւ հուլիսի 14-ին Պոլ Վուլֆովիցի խոսքերը, թե «Թուրքիայի անդամակցությունը ոչ միայն Թուրքիայի շահերին է համապատասխանում, այլեւ Եվրոպայի եւ Միացյալ Նահանգների»: Բանաձեւը պահանջում է հաշվի առնել Թուրքիայի կատարած բարեփոխումները եւ դեկտեմբերի 12-13-ը Կոպենհագենում կայանալիք Եվրախորհրդի նիստում որոշակի թվական նշանակել անդամակցության բանակցությունները սկսելու համար: Ուեքսլերի բանաձեւի հովանավորներն են Ներկայացուցիչների պալատի անդամներ Թոմ Լանտոսն ու էդ. Ուիտֆիլդը:

ԼՂՀ Վերահսկիչ պալատի նախագահ ընտրվեց Արկադի Սողոմոնյանը

ԼՂՀ խորհրդարանի հերթական 5-րդ լիագումար նիստում վերջապես ընտրվեց Աժ վերահսկիչ պալատի նախագահ: Այդ պաշտոնը Արցախի խորհրդարանում կվարի ոչ այնքան հայտնի Սոցիալ-դեմոկրատական կուսակցության ղեկավար, Աժ պատգամավոր Արկադի Սողոմոնյանը:

Վերջինիս թեկնածությանը դեմ քվեարկեց ՀՅԴ խորհրդարանական խմբակցությունը, պատճառաբանելով, որ Ա. Սողոմոնյանը ֆինանսիստ չէ եւ դժվար թե կարողանա այդ պաշտոնում արդյունավետություն ապահովել: Դաշնակցությունն, ըստ իս, ակնկալում էր իր իսկ նախաձեռնությամբ ստեղծված պաշտոնում ունենալ իր ներկայացուցիչը: Այդուհանդերձ, 19 կողմ ձայնով Ա. Սողոմոնյանի թեկնածությունն անցավ: Ասել է թե այսուհետեւ օրենսդիր մարմինը գործադիր իշխանության գործունեությունը վերահսկելու լուրջ լծակներ կունենա:

Խորհրդարանն առանց էական ձգձգումների ընդունեց «Պաշտպանության մասին» օրենքը: Այն, գլխադասային հանձնաժողովի նախագահի հիմնավորմամբ, նախատես ենթարկվել էր ԼՂՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչների հետ եւ առարկություններ չէր հարուցել, իսկ ստացված առաջարկությունների մի մասը մտցվել էր նախագծի մեջ:

«Էներգետիկայի մասին» օրենքը եւս տարաձայնությունների տեղիք չտվեց: Առաջարկությունը՝ արգելել բաշխիչ ցանցերի եւ էներգաարտադրողների սեփականաշնորհումը, մերժվեց մեծամասնության կողմից: Նոր օրենքով (մինչ այդ էներգետիկայի ոլորտը կարգավորվում էր օրենսդրական եւ իրավական նորմատիվ փաստաթղթերով) ՀՀ-ի օրինակով՝ կառավարության լիազորած մարմնին զուգահեռ էներգետիկայի խնդիրներով զբաղվող պետական հանձնաժողով չի գործի: Հիմնավորումը հետեւյալն է՝ էներգետիկայի ոլորտում տվյալ պահին գործում են «Արցախէներգո», «Արցախգազ» եւ «Ջերմային տնտեսություն» պետական կարգավիճակ ունեցող ձեռնարկությունները, որոնք գործում են կառավարության ենթակայության տակ:

«Գնումների մասին» օրենքով, որը նույնպես ընդունեց խորհրդարանը, պետք է ԼՂՀ-ում ստեղծվի մի ապահովել: Դաշնակցությունն, ըստ իս, ակնկալում էր իր իսկ նախաձեռնությամբ ստեղծված պաշտոնում ունենալ իր ներկայացուցիչը: Այդուհանդերձ, 19 կողմ ձայնով Ա. Սողոմոնյանի թեկնածությունն անցավ: Ասել է թե՝ այսուհետեւ օրենսդիր մարմինը գործադիր իշխանության գործունեությունը վերահսկելու լուրջ լծակներ կունենա:

Խորհրդարանն առանց էական ձգձգումների ընդունեց «Պաշտպանության մասին» օրենքը: Այն, գլխադասային հանձնաժողովի նախագահի հիմնավորմամբ, նախատես ենթարկվել էր ԼՂՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչների հետ եւ առարկություններ չէր հարուցել, իսկ ստացված առաջարկությունների մի մասը մտցվել էր նախագծի մեջ:

«Էներգետիկայի մասին» օրենքը եւս տարաձայնությունների տեղիք չտվեց: Առաջարկությունը՝ արգելել բաշխիչ ցանցերի եւ էներգաարտադրողների սեփականաշնորհումը, մերժվեց մեծամասնության կողմից: Նոր օրենքով (մինչ այդ էներգետիկայի ոլորտը կարգավորվում էր օրենսդրական եւ իրավական նորմատիվ փաստաթղթերով) ՀՀ-ի օրինակով՝ կառավարության լիազորած մարմնին զուգահեռ էներգետիկայի խնդիրներով զբաղվող պետական հանձնաժողով չի գործի: Հիմնավորումը հետեւյալն է՝ էներգետիկայի ոլորտում տվյալ պահին գործում են «Արցախէներգո», «Արցախգազ» եւ «Ջերմային տնտեսություն» պետական կարգավիճակ ունեցող ձեռնարկությունները, որոնք գործում են կառավարության ենթակայության տակ:

«Գնումների մասին» օրենքով, որը նույնպես ընդունեց խորհրդարանը, պետք է ԼՂՀ-ում ստեղծվի մի ա-

ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Խոսք նորընտիր համայնքապետին

Այդ անձնավորության հետ չունեմ անձնական ծանոթություն, սակայն կարդալով «Գործնական եւ տեսական կառավարում» գիտահանրամատչելի վերլուծական հանդեսը եւ մամուլում նրա մասին տպագրված հոդվածները, եկա այն համոզման, որ այս դժվարին պայմաններում հասարակության մեջ դեռեւս կան մարդիկ, որոնք աղրում եւ աշխատում են ոչ միայն իրենց համար, այլեւ մտահոգված են նաեւ կարիքավորներին, ծերերին, թոշակառուներին, երեխաներին օգնելու հարցերով: Նման մարդկանց ե՛ւ աշխատանքը, ե՛ւ վերաբերմունքը միշտ էլ ըստ արժանվույն գնահատվել են հասարակության կողմից: Նման գնահատումների արդյունքն էր նաեւ հոկտեմբերի 20-ին կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունը, որտեղ Երեւան քաղաքի կենտրոն համայնքի քաղաքացիներ պաշտոնում ժողովուրդը ծիշտ ընտրություն կատարելով իր ձայնը տվեց Գագիկ Բեգլարյանին:

Մեր՝ 15/39 տեղամասում քվեարկությանը մասնակցած 395 ընտրողից նրա օգտին ձայն էր տվել 238 մարդ (կամ 59,5 տոկոս): Իրոք, ժողովուրդը չի սխալվում:

Որպես քաղաքացի, սրանց շնորհավորելով նրան, ցանկանում եմ սրտիս անկեղծ խոսքն ուղղել: Քաղաքը մեր բոլորինն է, մեր բոլորի հարստությունն է, բոլորս մեր ներդրումն ունենք քաղաքի կառուցապատման գործերում: Կենտրոն համայնքը կենտրոն է ոչ միայն իր գրաված տեղով, այլեւ քաղաքական եւ մշակութային տարածք է, եւ այդ տարածքի յուրաքանչյուր փողոցի, շենքի հարազատությունը պարտադրում է, որ պահպանվի քաղաքի դիմագիծը: Այդ է պատճառը, որ որպես նորընտիր քաղաքապետ պրն Գ. Բեգլարյանը պետք է վերոհիշյալ տողերը լավ ընթռնելուց բացի լրջորեն զբաղվի համայնքի տնտեսական, սոցիալական, կենցաղային, մշակութային հարցերով, օգտագործելով նաեւ իր մասնագիտական կարողությունները:

Տարիների փորձը ցույց է տվել, որ յուրաքանչյուր ընտրության ժամանակ թեկնածուները ընտրողներին բազում եւ բազմաթիվ խոստումներ են տալիս: Սակայն ընտրվելուց հետո մոռանում են ամեն ինչ, ամեն բան:

Չեր ծրագրում դուք, ճիշտ է, ոչ մի խոստում չեք տվել: (Շատ էլ ճիշտ եք արել): Բայց խոստացել եք, որ կկրկնապատկեք ընտրողների վստահությունը: Ուստի ես ցանկանում եմ, որ ձեր աշխատանքով իսկապես կրկնապատկեք ընտրողների վստահությունը, աղաղակեք պատշաճ ուշադրություն եւ հոգատարություն մարդկանց նկատմամբ, հատկապես տարեցների, կենսաթոշակառուների, որոնք իսկապես հոգատարության ու ուշադրության խիստ կարիք ունեն: Պահպանեք նաեւ աշխատողի եւ ղեկավարի բարձր կոչումը, երբեք չկորցնեք ձեզ վստահողների հավատը: Որեւէ մեկի խնդրանքը կատարելու հնարավորություն չունենալու դեպքում ջերմ վերաբերմունքն էլ նրանց կգոհացնի: Ղեկավար լինելուց բացի, պահպանեք նաեւ բարեւար լինելու ձեր այդ հատկանիշը, շարունակեք հնարավորության սահմաններում նեցուկ եւ օգտակար լինել մարդկանց:

Այս եւ հետագա աշխատանքում ինչքան էլ բարձրանաք, չկորցնեք ձեր համեստությունը, աշխատասիրությունը, երբեք ու երբեք չմեծամտանաք:

Հաջողություններ ձեր պատասխանատու աշխատանքում:

ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Աշխատանքի վետերան

ԳՐԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

«Կորել» է երեկվա «Առավոտի» ողջ տպաքանակը...

Հոկտեմբերի 31-ին «Առավոտ» օրաթերթը չի հասել իր բաժանորդներին եւ ընթերցողներին:

Ի՞նչն է պատճառը, որ անհետացել է թերթի ողջ տպաքանակը: Ըստ «Տիգրան Մեծ» տպարանի տնօրեն Վրեժ Մարկոսյանի, որի մոտ գտնվում էր թերթի միակ հատարը, «Առավոտը» գիշերը ժամը 3:30-ին լրիվ տպաքանակով հանձնվել է «Հայմամուլ» գործակալությանը: Որքան էլ փորձեցինք վերջինից ճշտել այդ փաստը, չհաջողվեց, քանի որ «տնօրեն պրն Մխիթարյանը հիվանդության պատճառով երկու օր չի լինելու», պատասխանեց քարտուղարուհին: Իսկ փոխտնօրեն Արշալույս Մանուկյանի հետ մինչեւ օրվա վերջ հնարավոր չեղավ կապվել, տեղում չէր:

«Առավոտի» աշխատակիցները պնդեցին, որ տպաքանակի անհետանալու պատճառը կարող էր լինել Արմինե Ուղումյանի «Վարչապետի մերձավորները չարաշահում են» հոդվածը, որի շուրջ մինչ տպագրությունը բազմաթիվ զանգեր ու նախազգուշացումներ են եղել տարբեր ղեկավար այրերից, անգամ եղել է գումարային առաջարկ՝ չտպելու համար... Ի վերջո, թերթը լույս է տեսել միայն ինտերնետային տարբերակով, եւ նշված հոդվածը զետեղված է մյուս հոդվածների հետ:

Վերոհիշյալ հոդվածում, ինչպես կարդում ենք թերթի ինտերնետային տարբերակում, «խոսքը վարչապետի օգնական Գեւորգ Հակոբյանի, նրա տիկնոջ Աղելաիդա Մարտիրոսյանի, աշխատակազմի նախկին ղեկավար (այժմ էջմիածնի քաղաքապետ- Ծ. խ.) Հրաչիկ Գեւորգյանի եւ գործարար Նաիրա Նահապետյանի մասին է, որոնք (...) չարաշահումներ են թույլ տվել եւ 2-3 տարի իր բիզնեսը ծավալող գործարարին («Շրջադարձ» ՍՊԸ-ի տնօրեն Արսեն Հայրապետյանին- Ծ. խ.) խաղից դուրս վիճակում թողել»: Եթե նշյալ հոդվածն է պատճառը (ինչպես պնդում են «Առավոտի» աշխատակիցները), ապա եթե ոչ երեկ, ապա հաջորդ օրը կտպվեր, կամ էլ մյուս օրերին, մի՞թե բոլոր օրերի տպաքանակը նորից պիտի անհետանար, կարծում ենք՝ ոչ, եւ միգուցե ավելի լուրջ խնդիրներ կան, որոնք դեռ պարզ չեն:

Համենայն դեպս, եթե նկատի ունենանք, որ սրանից առաջ թերթերի, այդ թվում նաեւ **«Ազգի»** տպաքանակի միայն մասնակի հավաքումներ են արձանագրվել, այն էլ շրջաններում, ապա երեկվա «Առավոտի» ողջ տպաքանակի անհետացման փաստը ծայրաստիճան մտահոգիչ է եւ մեր մամուլի ողջ ընտանիքին մղում է միասնաբար առաջն առնելու այս նոր ձեւի գրաքննության:

ՄԱԲԻԵՏԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ՃԱ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010, Հանրապետության 47
Թող. 374-1-562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ՍԻԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրեն
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԵԼԵԱՆ / հեռ. 529353
Համակարգ. ծառայութիւն
/ հեռ. 582483
Շուրջօրյա լրահավաք ծառայութիւն
/ հեռ. 529353
Apple Macintosh
համակարգային շարուածը
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան, խստիւ արգելւում են, համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

Էսքսկլյուզիվ

ԱՍՏՂԱՄՈՒՈՒԹՅՈՒՆ

Հյուրանոցային ասողերը հուզում են, բայց չեն պարտադրում

Փարիզի կենտրոնում, Օպերայի հռչակավոր շենքի հարեւանությամբ է գտնվում «Ինտերկոնտինենտալ» հյուրանոցը: Ովքեր միայ թե շաս տեղյակ են միջազգային ճանաչում ունեցող հյուրանոցներին, պետք է իմանան, որ «Ինտերկոնտինենտալ» հյուրանոցներն ամբողջ աշխարհում ամենաբարձրակարգ ծառայություններն են առաջարկում: Փարիզի հյուրանոցը բացառություն չէ: Ամեն ինչից բացի, ունի օպերայի շենքի հետ ստորերկրյա կամ գետնուղի հատուկ հաճախորդների համար: Եվ այս ամենով հանդերձ, հյուրանոցը... չորսաստղանի է: Մյուս կողմից, Երեւանի նորաբաց կամ նորոգված հյուրանոցներն իրենք իրենց շնորհում են հինգ կամ չորս աստղանի հյուրանոցների կարգավիճակ: Ո՞րն է տրամաբանությունը եւ գոյություն ունե՞ն այնպիսի միասնական չափանիշներ, որոնք կիրառվում են աշխարհում:

Սամուլի ասուլիսներից մեկի ժամանակ առեւտրի եւ տնտեսական զարգացման փոխնախարար Արա Պետրոսյանը հայտնել էր, որ աստղերի սահմանման միասնականացված համակարգ չկա, բայց կան ընդհանուր պատկերացումներ: Նույն նախարարության զբոսաշրջության վարչության պետ Արթուր Զաքարյանը մեր զրույցի ժամանակ նշեց, որ աստղերի համար սահմանված չափանիշները կախված են տվյալ երկրի, մասնավորապես զբոսաշրջության ենթակառուցվածքների զարգացման աստիճանից եւ այլ գործոններից: Տարբեր են նաեւ աստղեր շնորհողները: Եթե ԱՄՆ-ում կամ Կանադայում դա սպառողները, այսինքն՝ տարբեր հասարակական կազմակերպություններն են որոշում, ապա աշխարհի գրեթե բոլոր մյուս երկրներում նման լիազորությունները սանձնում է պետությունը: Ընդհանրապես, ըստ Արթուր Զաքարյանի, հյուրանոցների որակավորման գաղափարը 25-30 տարի առաջ առաջինը կիրառվել է Ֆրանսիայում: Այդուհանդերձ, միասնական համակարգ չի ստեղծվել եւ, վարչության պետի հավաստմամբ, հինգաստղանի հյուրանոցներն ԱՄՆ-ում, Եվրոպայում եւ Ռուսաստանում տարբերվում են միմյանցից:

Իսկ ինչպե՞ս է տարբերվում, ենթադրենք, հինգաստղանի հյուրանոցը տվյալ երկրի չորսաստղանի հյուրանոցից: Այս հարցի առնչությամբ զբոսաշրջության վարչության պետն ասաց, որ թեկուզ քաղաքաշինական մեկ կանոնի խախտումը կամ պահպանումը կարող է ազդել աստղերի թվի վրա: Աստղերի, այսինքն՝ ծառայությունների որակական չափանիշների վրա կարող են ազդել, օրինակ, հյուրանոցային սենյակի չափերը, լողավազանի ծածկած կամ բաց լինելը, հյուրանոցից բացվող տեսարանը, մեքենաների կանգառի առկայությունը եւ բազմաթիվ այլ հանգամանքներ: «Արդյոք համապատասխանո՞ւմ են միասնական համակարգին, մեր զրուցակիցն ասաց, որ նման առաջարկություն Հայաստանն արել է Զբոսաշրջության միջազգային կազմակերպությանը: Նրա հավաստմամբ, այս կազմակերպության հովանավորությամբ միասնական համակարգ ստեղծելու առաջարկին միացել են նաեւ բազմաթիվ այլ երկրներ, եւ այս հարցը քննարկվելու է կազմակերպության գլխավոր ասամբլեայի ժամանակ: Խնդրի նման լուծման դեպքում արդեն կարող ենք ասել, որ հյուրանոցային աստղերը ոչ միայն հուզում են, այլեւ պարտադրում:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Վինեկաների մրցավազք

Ո՞րն է սահմանը

Վերջին տարիներին գունավոր լուսանկարչության եւ համակարգչային տեխնիկայի համագործակցումը բերեց լուսանկարչական ծառայությունների ցանկի ընդլայմանն ու բազմազանությանը: Չեռ բերված «հաջողություններ» տարածվեցին նաեւ դպրոցական ավարտական խմբանկարների վրա, որոնք հեշտությամբ տեսք ու ծավալ են ստանում:

Եթե հինգ-վեց տարի առաջ շրջանավարտների նկարը սահմանափակվում էր 2-3, իսկ առաջին դասարանի «Առաջին քայլեր»-ը՝ երկու էջով, այսօր «Շրջանավարտներ»-ը ծեւավորվում են 6-8, իսկ որոշ դասարանների համար նույնիսկ 10 էջանոց ալբոմներով: Այս ուռճացման գործընթացը լայն քայլերով մխրճվում է նաեւ մանկապարտեզները: Նախկին մեկ հաս 13 X 18 ծեւաչափի փոխարեն մանկապարտեզի ավարտական խմբերը պատվիրում են 2-3 էջանոց 15 X 21 ծեւաչափի խմբանկարներ:

Հինգ-վեց տարի առաջ այս գործընթացն այնպիսի թափով մտավ կրթական համակարգ, որ դրանով սկսեցին զբաղվել տարածքային կենտրոնները, մարզպետարաններն ու նույնիսկ նախարարությունը: Ընդունվեցին որոշումներ վինեկաների համար հավաքված գումարի 20-25 տոկոսը «թողնել դպրոցի ֆոնդին», իսկ դպրոցները բաժան-բաժան արվեցին փորձառու կամ անփորձ ու ճարպիկ լուսանկարիչների միջեւ:

Հարց է ծագում, թե ո՞րն է այսպիսի ուռճացման սահմանը եւ ծեւավորման գեղագիտական աստիճանը (չափանիշը), ովքե՞ր են այս գործի շարժիչ ուժերն ու տոն տվողները, լուսանկարիչնե՞րը, լուսանկարչասնե՞րը, թե՞ դպրոցի տնօրենները (հիշենք 20-25 տոկոսը): Ովքե՞ր են աշակերտներին եւ նրանց ծնողներին ներքաշում մի հերթական «վինեկա-լոտո» խաղի մեջ:

Մենք ամենուին էլ դեմ չենք այդ նկարներին, չէ՞ որ դա եւս հիշողություն է, պատմություն: Հարցը ծավալի ու ծեւավորման մասին է: Ի՞նչ է բովանդակում 8-10 էջանոց վինեկա-ալբոմը բացի շրջանավարտների լուսանկարներից եւ նրանց անուն-ազգանուններից: Թվարկենք՝ ծննդյան ամսաթիվը, տարեթիվը, աստղացույցի նշանը, հեռախոսահամարը, առաջին դասարանի սեւ-սպիտակ լուսանկարը, իրենց հորինած կամ հայտնի չէ, թե որտեղից ձեռք բերված էժան սիրային քառյակներ, աղջիկների համար իրենց նախընտրած ծաղկի տեսակը, իսկ տղաների՝ ավտոմեքենայի մակնիշը: Ռաբիսությունն այստեղից է սկիզբ առնում: Ի՞նչ պետք է անել նման պարագայում: Կարծում ենք, պակասում է ծնողների ակտիվ մասնակցությունը: Չէ՞ որ վերջին հաշվով նրանք են վճարողը, իսկ շատերի համար այսօր դա հեշտ չէ անել:

Ա. ԽԱՆՋՅԱՆ

Ճաղավանդակի փոխարեն ոտնաշղթա

ԵՐԵՎԱՆ, 31 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՀՀ նախագահին առընթեր մարդու իրավունքների հանձնաժողովի նախագահի տեղակալ Հայկ Ալումյանը հանձնաժողովականներին է ներկայացրել մի որոշման նախագիծ, որով առաջարկվում է դիմել կառավարությանը՝ առաջարկելով վերացնել դատարանի դահլիճներից երկաթյա վանդակները, դիմել դատարանների նախագահների խորհրդին՝ առաջարկելով վերանայել ամբաստանյալներին դատավարության ընթացքում վանդակներում պահելու պրակտիկան:

Նիստում հանձնաժողովի նախագահ Հովհաննես Ասրյանը, նշեց, որ եղել է մայրաքաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքների առաջին ատյանի դատարանում, ուր ճաղավանդակներ չկան: Փոխարենը կիրառվում է ոտնաշղթաների պրակտիկան, որն ավելի նպատակահարմար է: Հանձնաժողովի նախագահը նշեց, որ այն տեսանելի չէ դահլիճում ներկա գտնվողներին եւ հետո, հնարավորություն է տալիս ամբաստանյալին տեղաշարժվելու: Հանձնաժողովի անդամ Աշոտ Եսայանն առաջարկեց դիմել ՆԳ եւ արդարադատության նախարարություններին՝ ճաղավանդակներից ոտնաշղթաներին անցնելու համապատասխան կարգ սահմանելու համար: Կարծիքներ ներկայացրին նաեւ հանձնաժողովի այլ անդամներ եւ առաջարկվեց հանձնարարել Հ. Ալումյանին վերախմբագրել որոշման նախագիծը եւ նշել նաեւ կարծիքները: Հիշեցնենք, որ նախագծով նախատեսվում է նաեւ կատարել երկու մասից բաղկացած աղակերպաստան՝ ամբաստանյալների ու դատավարության մասնակիցների համար առանձին:

ԱՄԵՆ ՄԵԿԸ ԻՐ ՇԱՓՈՎ

Շեղ առանձնատների ու մեքենաների համար ավելի բարձր հարկ

Կառավարության նիստում երեկ ընդունված «Գույքահարկի մասին» նոր օրենքի նախագծում նոր դրույքներ են նախատեսված անշարժ գույքի եւ մեքենաների հարկման վերաբերյալ: Այդ մասին մանրամասներ ներկայացնելով, պետեկամուտների փոխնախարար Արմեն Ալավերդյանն ընդգծեց, որ այս փաստաթուղթը սոցիալական արդարությանն ուղղված քայլ է: Համաձայն դրա, նախ անշարժ գույքի արժեքի հաշվարկումը տեղի է ունենալու մի քանի չափանիշների հիման վրա, ինչը նշանակում է, որ մոտ կլինի շուկայական գնին: Հաջորդը՝ մտցվում է գույքահարկի դրույքաչափերի տարբերակում: Մինչեւ 10 մլն դրամ գնահատված բնակարաններն ու առանձնատները կհարկվեն իրենց արժեքի 0,07 տոկոսի չափով, 10-40 մլն դրամ գնահատվածները՝ 0,6 տոկոսի, իսկ 40 մլն դրամից ավելին՝ 1 տոկոսի չափով: Սա նշանակում է, որ շեղ եւ թանկարժեք առանձնատների սեփականատերերը դրանց համար ավելի մեծ գույքահարկ կվճարեն, քան մյուսները: Ակնկալվող գումարները կկազմեն 300-400 մլն դրամ, որոնք սակայն բյուջե չեն մտնի: Դրանք պետք է մուտք գործեն տեղական բյուջեներ: Այս հանգամանքը, մեր կարծիքով, որոշ խնդիրներ կարող է առաջացնել: Տեղական մարմինները կամ գործարքկնքեն շեղ առանձնատուն ունեցողի հետ, եւ վերջինս չի վճարի գույքահարկը, կամ պարզապես չեն համարձակվի պահանջել վճարել այդ հարկատեսակը: Մեր մտահոգությանն առնչությամբ Արմեն Ալավերդյանն ասաց, որ տեղական ինքնակառավարման մարմինները պետք է սովորեն հավաքել իրենց գումարները, եւ անցումը դրան տեղի կունենա ըստ ժամանակացույցի: Այդուհանդերձ, կարծում ենք, որ այս խնդիրը երբեւէ կառաջանա:

Հաջորդը, որ տեղեկացրեց պետեկամուտների փոխնախարարը, վերաբերում է մեքենաների հարկմանը: Մինչեւ 120 ձիաուժ ունեցող մեքենաների գույքահարկը մնալու է անփոփոխ, իսկ դրանից բարձրն ավելի բարձր դրույքաչափով կհարկվի: Դա նշանակում է, որ նոր BMW-ն կամ «Մերսեդեսը» կհարկվեն ներկայիս չափից 3 անգամ ավելի: Մեքենաների հարկման ժամանակ նկատի է առնվելու նաեւ նրանց շահագործման ժամկետը: Բեռնատարների հարկման դրույքաչափն անփոփոխ է թողնվել, իսկ 20 տարուց ավելի շահագործվածներն ընդհանրապես ազատվում են գույքահարկից: Այսուհետեւ հարկվելու են նաեւ մոտոցիկլետները, անշարժ գույքի ոչ բնակելի հատվածները (նկուղ, մանսարդ եւ այլն):

Ա. Մ.

Ում աշխատավարձերն են արագ բարձրանում

Սկիզբը էջ 1

Ինչ վերաբերում է աշխատավարձերին, ապա 2003 թ. հունվարի 1-ից ուսուցիչների աշխատավարձերը կբարձրանան 20 տոկոսով: Կբարձրանան նաեւ տնօրենների եւ ուսմասվարների աշխատավարձերը: Գրադարանների, թատրոնների, թանգարանների աշխատակիցների աշխատավարձերը ներկայիս 6-11 հազար դրամից կբարձրացվեն մինչեւ 13-18 հազար դրամ: Հունվարի 1-ից յուրաքանչյուր աշխատած տարվա համար 20 դրամով կբարձրանան կենսաթոշակները: Եկող տարվա ընթացքում, ըստ Վարդան Խաչատրյանի, եւս մեկ անգամ նման հնարավորություն կլինի: Ի տարբերություն այս, փաստորեն, չնչին բարձրացումների, անհամեմատ ավելի էական բարձրացումներ են նախատեսվում այլ դեպքերում: Այսպես՝ նախագահի աշխատավարձը, ըստ բյուջեի նախագծի, պետք է լինի 600 հազար դրամ ներկայիս 200 հազ. դրամի փոխարեն, վարչապետինը՝ 480 հազար դրամ, նախարարներինը եւ ԱԺ պատգամավորներինը՝ 360 հազար դրամ: Ի հավելումն փաստենք, որ մեր «խեղճուկրակ» պատգամավորները ստանում են նաեւ հավելավճար: Այս ավելացումները նախատեսվում են 2003 թ. հուլիսի 1-ից: Հարկային եւ մաքսային մարմինների միջին աշխատավարձը կազմելու է 120 դոլար, իսկ հուլիսի 1-ից՝ 200 դոլար: Ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարը դա բացատրեց բյուջեի եկամուտներն ավելացնելու անհրաժեշտությամբ: Քանի որ այս մարմիններն են ապահովում բյուջեի մուտքերը, ապա, նախարարի հավաստմամբ, պետք է նրանց բարձր վարձատրել, որպեսզի ավելի մեծ գումարներ բերվեն: Այս բյուջեում աճել են կրթական, սոցիալական, առողջապահական ծախսերը, եւ արտացոլվել են աղքատության նվազեցման ծրագրի պահանջները:

Էներգետիկ համակարգի ծախսերը՝ խմելու, ոռոգման ջրամատակարարում, ջրավազաններ եւ այլ, ծածկվելու են պետբյուջեից տրված սուբսիդիաներով: Փաստորեն, համակարգն ազատվում է չվճարողների խմբից: Հույս հայտնվեց, որ 1-3 տարվա ընթացքում էներգետիկ համակարգն ինքնաբավ կդառնա:

Միջազգային կազմակերպություններից ստացվող վարկերի մասին Վարդան Խաչատրյանը նշեց, թե մեծ հավանականություն կա, որ SAC-IV-ի 20 մլն դոլարը ստանանք մինչեւ այս տարվա վերջ: Իսկ SAC-V-ի 20 մլն դոլար կազմող առաջին չափաբաժինը՝ եկող տարի: Նախարարի խոսքից, որ այս դեպքում բավականին խճողված էր, հասկացանք, որ իրադարձությունների նման զարգացման դեպքում SAC-V-ի երկու չափաբաժինները կնախատեսվեն եկող տարվա բյուջեում: Նշվեց նաեւ, որ այս օրերին Երեւանում գտնվող Համաշխարհային բանկի ներկայացուցիչներն արձանագրել են, որ Հայաստանը կատարել է իր ստանձնած պարտավորությունները: Այս առնչությամբ նշենք, որ բաշխիչ էներգաբանցերի սեփականաշնորհումից հետո այս կառույցի արձագանքն ավելի շուտ բացասական էր: Վարդան Խաչատրյանը նշեց, որ «Միդլենդ ոիսորսզի» կողմից այս կառույցին են ներկայացվել իրենց գործունեության առնչությամբ վարկատուների եւ այլ գործընկերների տվյալները, որոնցից պարզ է դառնում, որ ընկերությունը վստահելի է:

Արտաքին պարտքի առնչությամբ նախարարը հայտնեց, որ ռուսական պարտքի վերացումից հետո եկող տարի նախատեսվում է մարել բուրմենական պարտքը: Դրանից հետո Հայաստանն այլեւս ծանր պարտքեր չի ունենա:

Համայնքների բյուջեները եկամտային եւ ծախսային մասով նույնն են՝ 22 մլրդ դրամ, ինչը պայմանավորված է համապատասխան օրենքի պահանջով:

Երախտագիտության խոսք

Ես 83 տարեկան եմ, եւ շատ հիվանդություններ ունեմ: Բարի, հոգատար ու ջերմ վերաբերմունքի համար երախտագիտության եւ շնորհակալական խոսքս եմ հղում «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոնի տնօրեն Լիդա Մուրադյանին եւ տեխնիկական անձնակազմին, սրտի վիրաբույժ, պրոֆեսոր Հրայր Հովակիմյանին, սրտաբաններ Շահեն Խաչատրյանին, Նարինե Գոջաբաշյանին, լաբորատորիայի վարիչ Անուշ Պողոսյանին եւ իր աշխատակցուհիներին:

Իմ խորին երախտագիտությունս եմ հայտնում բոլոր նրանց, ովքեր տարիներ շարունակ անշահախնդրորեն, բարեգործական սկզբունքներով խնամել ու բուժել են ինձ: Հանրապետական հիվանդանոցի բժիշկ, ամբիոնի վարիչ Յուրի Ներսիսյանին, Ռիմա Սանուչարյանին, բուժքույր Գայանե Սարգսյանին, Նինա Գեւորգյանին:

Երախտապարտ եմ բոլոր այն դեղատների վարիչներին, ովքեր ինձ տրամադրել են դեղորայք ինքնարժեքով:

ՏՐԱՅԲ ԳԵՂԱՄՅԱՆ

Հայրենական պատերազմի հաշմանդամ

Վերադարձ

Հատուկ հանձնարարություններով դեսպան Դավիթ Շահնազարյանը 1997 թ. սեպտեմբերի 18-ին եւ նոյեմբերի 13-ին երկու մամուլի ասուլիս տվեց. երկուսում էլ գլխավորապես կանգ առնելով հիմնական երկու թեմաների վրա՝ ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթաց կամ ճգնաժամ եւ Հայաստանի ներքաղաքական զարգացումներ:

Սեպտեմբերի 18-ին, առաջին նախագահի հայտնի մամուլի ասուլիսից մեկ շաբաթ առաջ, Շահնազարյանը կարծում էր, որ ԼՂ հարցի շուրջ լուրջ անհաջողություն արձանագրվեց հենց այն ժամանակ, երբ Հայաստանում ժողովրդավարությունը մերժելու գործընթացի: Մեր կարծիքով, 1994 թ. դեկտեմբերի 28-ին, երբ մեկ օրում անօրինաբար փակվեցին 12 անուն թերթեր, 1995 թ. եւ հատկապես 1996 թ. ոչ ազատ, անարդար եւ անթափանց ընտրությունները, սեպտեմբերյան բռնությունները արտաքին աշխարհի համար հրաշալի լծակներ էին Հայաստանի վրա ճնշում գործադրելու համար: Պարոն Շահնազարյանը նշում էր, որ «այսօր արդեն հասունացել է ՀՀ կողմից ԼՂՀ-ի ճանաչման հարցը»:

Այս վերջին տեսակետը, որ, կարծում եմ, ժամանակավրեպ էր, Շահնազարյանը կրկնեց նոյեմբերի 13-ի ասուլիսում, երբ արդեն տասը օր շարունակ ընդդիմությունը հանրապետության առաջին նախագահին դատափետում էր նրան մեղադրելով իբր Ղարաբաղը ծախելու փորձերի մեջ: Նոյեմբերի 1-ին Լեւոն Տեր-Պետրոսյանը միանգամից մի քանի թերթերում տպագրել էր իր «Պատերազմ, թե՞ խաղաղություն. լրջանալու պահը» հոդվածը: Եթե ընդդիմությունը, մտավորականներ, ոչ այնքան ընդդիմադիր գործիչներ, լրագրողներ առաջին նախագահին ճնշադատելիս հաճախ անցնում էին պարկեշտության չգծված սահմանները, Տեր-Պետրոսյանի խոսքերով «ընդդիմության արձագանքը դուրս չեկավ հայհոյանքի, վերագրումների, տիտակավորումների եւ խեղաթյուրումների շրջանակից», ապա Շահնազարյանը գործում էր կառուցողական ընդդիմության դիրքերից: Նա ԼՂ հիմնախնդրի կարգավորման հարցում պաշտոնական Երեւանի դիրքորոշումը համարում էր անընդունելի, որ իշխանությունները կարգավորման ելքեր չեն էլ որոնում, իսկ առաջադրված այլընտրանքը «պատերազմ, թե՞ խաղաղություն» հարցադրումը որակում էր «ոչ կոռեկտ»: Վիճարկելով նախագահի տեսակետը, թե Հայաստանը ծեռնոց է նետել միջազգային հանրությանը, պարոն Շահնազարյանը ճշմարտացիորեն հարցնում էր, թե այդ դեպքում ինչո՞ւ էր հարցը միջազգայնացվում 1992 թ.: Հայաստանի դիրքորոշումը Ղարաբաղին տանում է միջազգային մեկուսացման, վերջին երկու տարիներին Ադրբեջանի դիրքորոշումը մնաց նույնը, իսկ Հայաստանի դիրքորոշումը մոտեցավ Ադրբեջանի դիրքորոշմանը, նշում էր Շահնազարյանը եւ առաջարկում, իր կարծիքով, ելք. «Նվազագույնը, որ այս գործընթացում կարող է անել Հայաստանը, այս է՝ ճանաչել ԼՂՀ-ն եւ դուրս գալ կարգավորման գործընթացից»:

Լեւոն Տեր-Պետրոսյանի հոդվածի մասին այնքան շատ է գրվել, որ ինչքան էլ դիմես մտավարժանքների, դժվար է նոր, թարմ բան գտնել: Հինգ տարիների հեռվից, որը պատմության համար ընդամենը ակնթարթ է, փորձենք տեսնել, թե առաջին նախագահի հոդվածում նշվածներից քանիսն են իրականություն դարձել:

Նախագահն ասում էր, որ Հայաստանն ու Ղարաբաղը «այսօր ուժեղ են, քան երբեք, բայց հակամարտության չկարգավորման դեպքում մեկ-երկու տարի հետո անհամեմատ թուլանալու են»: Բարեբախտաբար, այս կանխատեսումը չիրականացավ: Անշուշտ, այսօր ՀՀ-ն եւ ԼՂՀ-ն տնտեսական դրախտային իրավիճակում չեն, 1997-ից համեմատաբար հիշ բան է փոխվել, բայց փոխվել է դրական իմաստով: Կարելի է տողերիս հեղինակին մեղադրել կուրության մեջ, որ չեմ տեսնում, թե ՀՀ-ն կործանվում է, բայց «մեկ-երկու տարի անց», իմա՝ հինգ տարի անց, Հայաստանն ու Ղարաբաղն ավելի բարվոք են, քան «լրջանալու պահին»:

«Այն, ինչ մերժում ենք այսօր, ապագայում ենք խնդրելու, բայց չենք ստանալո»ւ, ասում էր նախագահը: Կոպիտ ասած՝ ՀՀ իշխանությունների «ուժային թեւը» մերժում էր Ղարաբաղն Ադրբեջանին թողնելու միջնորդների առաջարկությունը: Ուրեմն, ապագայում Հայաստա՞նը պետք է խնդրի, որ Ղարաբաղը մնա Ադրբեջանի կազմում: Բարեբախտաբար, այս հինգ տարիներին Հայաստանին նման սպառնալիք չի եղել:

«Առաջին թյուրիմացությունը, եթե կուզեք վտանգավոր մոլորությունն այն է, թե ԼՂ-ի հակառակորդը Ադրբեջանն է, որին կարելի է հեշտությամբ ծնկի բերել: Իրականում, սակայն, Ղարաբաղի հակառակորդը միջազգային հանրությունն է, որին փաստորեն մենք ծեռնոց ենք նետել», գրում էր առաջին նախագահը: Այս տրամաբանությամբ Ղարաբաղի հակառակորդը փաստորեն եղել է Հայոց համազգային շարժումը (չափոթել ՀՀՇ-ի հետ), հայ ժողովուրդը, որը Տեր-Պետրոսյանի գլխավորությամբ նաեւ «միացում» էր բղավում: Ուրեմն, բղավոցների իմաստը ՀՀՇ-ին սկուտեղի վրա իշխանության բերե՞լն էր: Ղարաբաղի հակառակորդն իրականում 1996 թ. ընտրություններն էին եւ դրանց հետեւանքները: Տեր-Պետրոսյանը պետք է լրջանար 96-ի սեպտեմբերին եւ հրաժարվեր նախագահի պաշտոնից, որքան էլ Վազգեն Սարգսյանը, Վանո Սիրադեղյանը ուժ գործադրելով համոզեցին նրան մնալ գահին:

Այսօր շատ է գրվում, թե իշխանամետ մամուլը վարկաբեկում է առաջին նախագահին: Միգուցե կան հրապարակումներ, որոնցում Տեր-Պետրոսյանը ներկայացվում է ծուռ հայելու մեջ, կամ բացառապես ներկայացվում են նրա գահակալության տարիների Հայաստանի դժվարությունները: Մեր համոզմամբ, առաջին նախագահին վարկաբեկեցին իր ընկերները 1996 թվականին, չէ՞ որ Տեր-Պետրոսյանը պատրաստ էր շնորհավորել ընտրված նախագահ Մանուկյանին, իրեն բնորոշ սառնաարտությամբ ընդունել պարտությունը:

Այսօր էլ Տեր-Պետրոսյանին վարկաբեկում է իր շրջապատը՝ գլխավորությամբ Դավիթ Շահնազարյանի (որի երկու ասուլիսներում հնչած մտքերին հենց այնպես չանդրադարձանք), անընդհատ սպառնալով, թե Տեր-Պետրոսյանը մասնակցելու է առաջիկա նախագահական ընտրություններին:

Հանրապետության առաջին նախագահը հինգ տարի առաջ այս օրերին պատրաստ էր հրաժարական տալ

Լեւոն Տեր-Պետրոսյանի համար եկել էր լրջանալու պահը, եւ նա գրեց «Պատերազմ, թե՞ խաղաղություն» հոդվածը

տանում վտանգվեց ժողովրդավարական ինստիտուտների, մասնավորապես ազատ եւ արդար ընտրությունների ապագան: Բանախոսը հավանաբար նկատի էր ունեցել 1995 թ. խորհրդարանական, 1996 թ. նախագահական ընտրությունները՝ հատկապես նախագահական ընտրություններին հետեւած սեպտեմբեր 25-26-ի դեպքերը, երբ մայրաքաղաքի կենտրոն բերվեցին հրասայլեր, իրականում ընտրված նախագահ Վազգեն Մանուկյանի կողմնակիցները գրոհեցին Աժ շենքը, անողոքաբար ծեծվեցին Բաբկեն Արարքյանն ու Արա Սահակյանը: Այդօրինակ իրավիճակում, որը բնութագրվում է «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն», երբ կանգ էր առել բանակցային գործընթացը, «պայթեց Լիսաբոնը», «Լիսաբոնը պայթեց, իհարկե, սեպտեմբերյան իրադարձություններից հետո», «Լիսաբոնի պտուղները մինչեւ այսօր մենք քաղում ենք», «սեպտեմբերյան իրադարձություններից հետո ՀՀ արտաքին քաղաքականությունը հայտնվեց փակուղու առջեւ», եւ Հայաստանը վերածվեց անկլավի, մամլո ասուլիսում ասում էր Շահնազարյանը:

Առաջին նախագահի մերձավորագույն շրջապատի ներկայացուցիչը, որ ժամանակին զբաղվում էր ղարաբաղյան հարցով, նկատում էր, որ հարցի կարգավորումը, ավելի ճիշտ՝ ճգնաժամը, ուղղակի հետեւանք է Հայաստանում ժողովրդավարությունը մերժելու գործընթացի: Մեր կարծիքով, 1994 թ. դեկտեմբերի 28-ին, երբ մեկ օրում անօրինաբար փակվեցին 12 անուն թերթեր, 1995 թ. եւ հատկապես 1996 թ. ոչ ազատ, անարդար եւ անթափանց ընտրությունները, սեպտեմբերյան բռնությունները արտաքին աշխարհի համար հրաշալի լծակներ էին Հայաստանի վրա ճնշում գործադրելու համար: Պարոն Շահնազարյանը նշում էր, որ «այսօր արդեն հասունացել է ՀՀ կողմից ԼՂՀ-ի ճանաչման հարցը»:

Այս վերջին տեսակետը, որ, կարծում եմ, ժամանակավրեպ էր, Շահնազարյանը կրկնեց նոյեմբերի 13-ի ասուլիսում, երբ արդեն տասը օր շարունակ ընդդիմությունը հանրապետության առաջին նախագահին դատափետում էր՝ նրան մեղադրելով իբր Ղարաբաղը ծախելու փորձերի մեջ: Նոյեմբերի 1-ին Լեւոն Տեր-Պետրոսյանը միանգամից մի քանի թերթերում տպագրել էր իր «Պատերազմ, թե՞ խաղաղություն. լրջանալու պահը» հոդվածը: Եթե ընդդիմությունը, մտավորականներ, ոչ այնքան ընդդիմադիր գործիչներ, լրագրողներ առաջին նախագահին ճնշադատելիս հաճախ անցնում էին պարկեշտության չգծված սահմանները, Տեր-Պետրոսյանի խոսքերով «ընդդիմության արձագանքը դուրս չեկավ հայհոյանքի, վերագրումների, տիտակավորումների եւ խեղաթյուրումների շրջանակից», ապա Շահնազարյանը գործում էր կառուցողական ընդդիմության դիրքերից: Նա ԼՂ հիմնախնդրի կարգավորման հարցում պաշտոնական Երեւանի դիրքորոշումը համարում էր անընդունելի, որ իշխանությունները կարգավորման ելքեր չեն էլ որոնում, իսկ առաջադրված այլընտրանքը «պատերազմ, թե՞ խաղաղություն» հարցադրումը որակում էր «ոչ կոռեկտ»: Վիճարկելով նախագահի տեսակետը, թե Հայաստանը ծեռնոց է նետել միջազգային հանրությանը, պարոն Շահնազարյանը ճշմարտացիորեն հարցնում էր, թե այդ դեպքում ինչո՞ւ էր հարցը միջազգայնացվում

համար ընդամենը ակնթարթ է, փորձենք տեսնել, թե առաջին նախագահի հոդվածում նշվածներից քանիսն են իրականություն դարձել:

Նախագահն ասում էր, որ Հայաստանն ու Ղարաբաղը «այսօր ուժեղ են, քան երբեք, բայց հակամարտության չկարգավորման դեպքում մեկ-երկու տարի հետո անհամեմատ թուլանալու են»: Բարեբախտաբար, այս կանխատեսումը չիրականացավ: Անշուշտ, այսօր ՀՀ-ն եւ ԼՂՀ-ն տնտեսական դրախտային իրավիճակում չեն, 1997-ից համեմատաբար հիշ բան է փոխվել, բայց փոխվել է դրական իմաստով: Կարելի է տողերիս հեղինակին մեղադրել կուրության մեջ, որ չեմ տեսնում, թե ՀՀ-ն կործանվում է, բայց «մեկ-երկու տարի անց», իմա՝ հինգ տարի անց, Հայաստանն ու Ղարաբաղն ավելի բարվոք են, քան «լրջանալու պահին»:

«Այն, ինչ մերժում ենք այսօր, ապագայում ենք խնդրելու, բայց չենք ստանալո»ւ, ասում էր նախագահը: Կոպիտ ասած՝ ՀՀ իշխանությունների «ուժային թեւը» մերժում էր Ղարաբաղն Ադրբեջանին թողնելու միջնորդների առաջարկությունը: Ուրեմն, ապագայում Հայաստա՞նը պետք է խնդրի, որ Ղարաբաղը մնա Ադրբեջանի կազմում: Բարեբախտաբար, այս հինգ տարիներին Հայաստանին նման սպառնալիք չի եղել:

«Առաջին թյուրիմացությունը, եթե կուզեք վտանգավոր մոլորությունն այն է, թե ԼՂ-ի հակառակորդը Ադրբեջանն է, որին կարելի է հեշտությամբ ծնկի բերել: Իրականում, սակայն, Ղարաբաղի հակառակորդը միջազգային հանրությունն է, որին փաստորեն մենք ծեռնոց ենք նետել», գրում էր առաջին նախագահը: Այս տրամաբանությամբ Ղարաբաղի հակառակորդը փաստորեն եղել է Հայոց համազգային շարժումը (չափոթել ՀՀՇ-ի հետ), հայ ժողովուրդը, որը Տեր-Պետրոսյանի գլխավորությամբ նաեւ «միացում» էր բղավում: Ուրեմն, բղավոցների իմաստը ՀՀՇ-ին սկուտեղի վրա իշխանության բերե՞լն էր: Ղարաբաղի հակառակորդն իրականում 1996 թ. ընտրություններն էին եւ դրանց հետեւանքները: Տեր-Պետրոսյանը պետք է լրջանար 96-ի սեպտեմբերին եւ հրաժարվեր նախագահի պաշտոնից, որքան էլ Վազգեն Սարգսյանը, Վանո Սիրադեղյանը ուժ գործադրելով համոզեցին նրան մնալ գահին:

Այսօր շատ է գրվում, թե իշխանամետ մամուլը վարկաբեկում է առաջին նախագահին: Միգուցե կան հրապարակումներ, որոնցում Տեր-Պետրոսյանը ներկայացվում է ծուռ հայելու մեջ, կամ բացառապես ներկայացվում են նրա գահակալության տարիների Հայաստանի դժվարությունները: Մեր համոզմամբ, առաջին նախագահին վարկաբեկեցին իր ընկերները 1996 թվականին, չէ՞ որ Տեր-Պետրոսյանը պատրաստ էր շնորհավորել ընտրված նախագահ Մանուկյանին, իրեն բնորոշ սառնաարտությամբ ընդունել պարտությունը:

Այսօր էլ Տեր-Պետրոսյանին վարկաբեկում է իր շրջապատը՝ գլխավորությամբ Դավիթ Շահնազարյանի (որի երկու ասուլիսներում հնչած մտքերին հենց այնպես չանդրադարձանք), անընդհատ սպառնալով, թե Տեր-Պետրոսյանը մասնակցելու է առաջիկա նախագահական ընտրություններին:

Եթե չլիներ նրա այն ժամանակվա շրջապատը, ապա Տեր-Պետրոսյանը չէր մասնակցի 1996-ի ընտրություններին, իր խոսքերով՝ «սերունդների աչքում մնալով որպես անկախություն նվաճած, ղարաբաղյան հերոսամարտը շահած, հայկական տարածքներ նվաճած նախագահ, անկախ այն բանից, թե որքան արդարացի է այդ ամենն ինձ վերագրելը»: Անկասկած, անկախ նրանից, թե որքան արդարացի է այս ամենի վերագրումն առաջին նախագահին, միեւնույն է, 25, 50 տարի հետո պատմությունը նրան կհիշի առավելապես դրական շեշտադրումներով:

Մինչ Դավիթ Շահնազարյանը շահարկում է Լեւոն Տեր-Պետրոսյանի անունը, առաջին նախագահը ճիշտ կլիներ հրապարակավ հայտարարեր, որ չի մասնակցի ընտրություններին: Միգուցե առաջին նախագահը մտածում է, թե ազգովին պիտի խնդրե՞նք: Անցե՞լ են ռոմանտիզմի ժամանակները:

Հանրապետության առաջին նախագահը հինգ տարի առաջ այս օրերին պատրաստ էր հրաժարական տալ: Տեր-Պետրոսյանի համար ուշացումով եկել էր լրջանալու պահը, եւ հարգարժան նախագահը հոդված գրեց: Բայց դա ոչ թե հոդված էր ԼՂ հարցի, մեր պետականության անվտանգության, այլ հրաժարականի նախերգանք էր:

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ

Արտագաղթ. ակնկալիքներ եւ իրականություն

«Ես գնեցի յոթ օրվա լեհական վիզա 120 ԱՄՆ դոլարով: Ինքնաթիռով հասանք Մինսկ, ապա ավտոբուսով մեկնեցինք Վարշավա: Ճեյենագորայում ես վճարեցի 200 ԱՄՆ դոլար, որպեսզի ինձ մեքենայով անտառի միջով մոտեցնեն Գերմանիայի սահմանին: Լեհ ուղեկցողը վերցրեց մեր անձնագրերը, ասաց, որ պետք է մեքենան փոխենք սահմանի վրա եւ Գերմանիա մտնենք սահմանի չվերահսկվող հատվածով: Ոչ մի մեքենա էլ չեկավ մեր հետեւից, բոլորս կորցրինք անձնագրերը եւ ստիպված էինք 8 ժամ քայլել անտառով, ջրերի միջով: Նոյեմբեր ամիսն էր, ընտանիքներից շատերը երեխաների հետ էին: Մայրերը ինքներ հաբեր էին տալիս երեխաներին, որպեսզի նրանք լաց չլինեն, աղմուկ չհանեն: Հակառակ դեպքում մեզ կհայտնաբերեին: Հետո մեկ այլ մեքենա տեսանք, որ անօրինական գաղթականների էր տեղափոխում, եւ վազելով մոտեցանք, որ Ֆրանկֆուրտ հասնենք: Անձնագրերն այդպես էլ չհաջողվեց հետ ստանալ:

Ծանոթս, որ ինձ աշխատանք էր խոստացել, այդպես էլ չկարողացավ օգնել, ստիպված եղա մի քանի ամիս փախստականների ճամբարում անցկացնել: Երբեք այս քայլին չէի դիմի, եթե իմանայի՝ ինչի միջով եմ անցնելու: Նրանք, ովքեր չեն փորձել, մեկնելու մեծ ցանկություն ունեն: Իսկ ես դա կանեմ միայն այն դեպքում, երբ իմանամ՝ օրինական եմ եւ աշխատանք ունեմ»:

Սա Միգրացիայի միջազգային կազմակերպության անցկացրած հետազոտությունից մի մասնավոր դեպք է ընդամենը, որ նկարագրում է անօրինական միգրանտի անցած ճանապարհը: Դա նույնությամբ, բայց ընդհանուր առմամբ բնորոշ է անօրինական արտագաղթի ուղին բռնած մեր հայրենակիցների համար: Սակայն նրանք չեն սիրում խոսել այս մասին, շատ քչերն են ասում, որ լուրջ, երբեմն նվաստացնող դժվարությունների առաջ են կանգնում:

Օրինական միգրացիայի համար մեր երկրի քաղաքացիների առջեւ բարեկեցիկ երկրների սահմանները հազվադեպ են բացվում: Անօրինական միգրանտների, ապաստան հայցողների փորձ հատվածին է հաջողվում օրինականացնել տվյալ երկրում իր բնակությունը: Գերակշիռ մասը գաղտնի կյանք է վարում՝ ծանր ֆիզիկական աշխատանքի դիմաց ստանալով չնչին վարձատրություն, շատ հաճախ արտերկրում անելով այն աշխատանքը, որ չէին անի հայրենիքում:

Ամենահամեստ հաշվարկներով՝ նույնիսկ 1991-ից մինչ օրս Հայաստանից 1 միլիոնից ավելի մարդ է արտագաղթել:

Օդանավակայաններից ուղեւորահոսքերի տվյալները ցույց են տալիս, որ 1992-2000 թթ. ժամանակահատվածում մեկնումները 647.000-ով գերազանցել են ժամանումների ծավալը: Ըստ 1991-1998 թթ. Հայաստանում արտաքին միգրացիոն գործընթացների հետազոտության, էմիգրացիոն սալդոն (ներառյալ ցամաքային ուղիները) այդ ժամանակահատվածում կազմել է 760-780 հազար մարդ: Թեեւ բարձրակետը եղել է 1992-1994 թթ. եւ 1995 թ.-ից ի վեր օդային ճանապարհով էմիգրացիոն սալդոն կտրուկ ընկել է, այդուհանդերձ, շարունակում է բացասական մնալ (25700՝ 2000 թ. ընթացքում): (Տվյալները վերցված են միգրացիայի միջազգային կազմակերպության «Անկանոն միգրացիան Հայաստանից եւ միգրանտների անօրինական տեղափոխությունները» հրատարակությունից): Պարզ է, որ Հայաստանից արտագաղթողների զգալի մասը դա անում է ապօրինի ճանապարհներով:

Վերջին տարիներին, մանավանդ սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունից հետո, զարգացած շատ երկրների ներգաղթի վերահսկողությունը խստացվել է, հետեւաբար նվազել են այդ երկրներում միգրանտների օրինական ապրելու եւ աշխատելու հնարավորությունները: Միեւնույն ժամանակ տնտեսական դժվարին իրավիճակն ու զարգացած պետություններում աշխատուժի պակասը նպաստեց անկանոն միգրացիան խթանող ծառայությունների աճին՝ կեղծ ճամփորդական փաստաթղթեր, ծածուկ սահմանահատումներ, կացարանի տրամադրում, աշխատանքի միջնորդություն: Սակայն այդպիսի ծառայություն մատուցողների զգալի մասի նպատակն ամենեւին էլ մարդկանց օգնելը չէ: Այդ է պատճառը, որ խոստումներն ու իրականությունը հաճախ չափազանց տարբեր են լինում. մարդիկ լուրջ բարդությունների առջեւ են կանգնում, ընդհուպ մարդկանց առեւտրով զբաղվող հանցագործների ձեռքն ընկնելը (գաղտնիք չէ նաեւ, որ դայակի, մատուցողի աշխատանքի մեկնած բազմաթիվ կանանց պարտադրում են մարմնավաճառությամբ զբաղվել):

Մեր ազգին հատուկ չէ հարցի իրավաբանական կողմին լուրջ ուշադրություն դարձնելը, մենք խոստումների ավելի շատ ենք հավատում, ու խաբվածները միշտ ավելի շատ են լինում: Հայաստանի օրենսդրությունն էլ իր հերթին ապօրինի փոխադրողներին հետ չի պահում իրենց ձեռնարկից. այս գործունեությունը նախ՝ չի լիցենզավորվում, իրական պատիժները եւս հստակեցված չեն: Ապօրինի այս գործունեության համար պարարտ հող է ստեղծված:

Միգրացիայի միջազգային կազմակերպությունը Հայաստանից միգրանտների ապօրինի սահմանահատումները կանխելու եւ կրճատելու ճանապարհներից է համարում հասարակության մեջ իրազեկության բարձրացումը, ապօրինի սահմանահատումներով զբաղվողների հետապնդումը, սահմանային կառավարման ամրապնդումը, վերադարձի եւ վերաինտեգրման օժանդակումը, կանոնավոր միգրացիայի ավելի լայն հնարավորությունների ստեղծումն ու տնտեսական զարգացումը:

Վերջինը օրինական կամ անօրինական արտագաղթի կասեցման լավագույն ճանապարհն է: Թերեւս մեջբերենք երկիրն անօրինական ճանապարհով լքած եւս մեկ հայաստանցու խոսքերը. «Ես եղել եմ Հանովերում, աշխատանք գտա շինարարությունում: Տուն էինք կառուցում: Հարեւանությամբ ապրող մի գերմանացի հայտնել էր, որ աշխատողների մեջ կա անօրինական օտարերկրացի, եւ ինձ բռնեցին ու արտաքսեցին: Ես բոլորովին էլ չեմ ափսոսում: Թեեւ այս ուղեւորության նպատակն էր ապրուստ վաստակել, որ կարողանամ ընտանիս պահել, այսուհանդերձ ես հավատացած եմ, որ տնից լավ տեղ չկա:

Եթե միայն այստեղ հնարավոր լիներ աշխատանք գտնել, ինչո՞ւ պետք է թափառեինք աշխարհով մեկ»:

ՄԱՌԵՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Մոսկվան խնդրել է փակել Թուրքիայում ու Վրաստանում գործող չեչենական ներկայացուցչությունները

Թուրքերը չեն պատասխանել, վրացիները «ոչ» են ասել

Մոսկվայի Թատերական կենտրոնի ահաբեկչությունից հետո Մոսկվան պաշտոնապես Անկարային եւ Թբիլիսիին խնդրել է փակել Թուրքիայում ու Վրաստանում գործող չեչենական ներկայացուցչությունները՝ այդ երկրներին հղած նոտաներում մանրամասնելով, որ այսպես կոչված «Իչկերիայի չեչենական հանրապետության» ներկայացուցչությունները Չեչնիայում ռուսական դաշնային ուժերի դեմ կռվող չեչեն եւ այլազգի ահաբեկիչներին տրամադրում են ֆինանսական օգնություններ: Չեչնիայի նախագահ Ասլան Մասխադովը ներկայացուցիչներ ունի տասը երկրներում, այդ թվում՝ Ադրբեջանում: Տակավին հայտնի չէ՝ Մոսկվան պաշտոնապես դիմե՞լ է Բաքվին Ադրբեջանում գործող չեչենական ներկայացուցչությունը փակելու խնդրանքով, ինչպես Վրաստանի եւ Թուրքիայի դեպքում: Եթե նման խնդրանք լիներ, ապա հավանաբար ռուսական ՁԼՄ-ներն այդ մասին կակնարկեին, հատկապես այս օրերին, երբ չեչենական թեման օրակարգում է:

Բաքուն պաշտոնապես չի հայտարարել, թե փակում է Ադրբեջանում գործող, արդարադատության նախարարությունում մշակութային կենտրոնի անվան տակ գրանցված չեչենական ներկայացուցչությունը: Պաշտոնական միակ աղբյուրը շարունակում է մնալ Ադրբեջանում Ռուսաստանի դեսպան Նիկոլայ Դյաբովը, որն անցած ուրբաթ լրագրողների հետ հանդիպմանը երախտագիտություն էր արտահայտել Բաքվի իշխանություններին «չեչենական որջը» փակելու առիթով: Հաջորդ օրն Ադրբեջանում «Իչկերիայի չեչենական հանրապետության» ներկայացուցչության մամլո ծառայության ղեկավար Գյուլնարա Ինանջը կտրականապես հերքել է ներկայացուցչությունը փակելու մասին ադրբեջանական եւ ռուսական մամուլի հրապարակումները: Հոկտեմբերի 29-ի համարում «Վաշինգտոն

ռաբանություն էր ներկայացնում, հատուկ ակնարկելով, որ կկասարվի Մոսկվայի ցանկությունը, եթե Ռուսաստանն ի պատասխան արգելի Մոսկվայում գործող Աբխազիայի եւ Հարավային Օսիայի ներկայացուցչությունները: Վրաստանում Ռուսաստանի դեսպան Վլ. Գուդեւը ողբերգությունից մի քանի օր անց հայտարարեց, որ «վրաց իշխանություններին երախտապարտ կլինի», եթե 2002 թ. նոյեմբերին փակվի չեչենական ներկայացուցչությունը: Վրացական կողմը պատասխանն սպասեցնել չտվեց. փոխարտգործնախարար Մերաբ Անթաձեն հայտարարեց, որ չեչենական ներկայացուցչությունն արդարադատության նախարարությունում գրանցված չէ, պետական որեւէ պաշտոնյա չի հանդիպում այդ ներկայացուցչության որեւէ աշխատակցի հետ: Եթե ռուսական կողմը ներկայացնի համապատասխան ապացույցներ, որ «Թբիլիսիի չեչենական ներկայացուցչությունը» հանցավոր գործունեություն է ծավալում, ապա իշխանությունները համապատասխան միջոցների կդիմեն, ասել է Անթաձեն: Հիշեցման կարգով նշենք, որ ռուսական կողմը բազմիցս ներկայացրել է հանցավոր գործունեությունն ապացուցող փաստեր, սակայն ներկայացուցչությունը ոչ մի րոպե չի փակվել: Սպասեցնել չտվեց նաեւ չեչենական կողմի արձագանքը. ահաբեկիչները Թբիլիսիին սպառնացին զենքն ուղղել վրացիների դեմ, եթե վրաց իշխանությունները ենթարկվեն ռուսների պահանջին:

Մյուս կողմից, ռուսական «Վրեմյա նովոստեյ» թերթի Թբիլիսիի թղթակիցը հաղորդում է, որ Վրաստանում Ասլան Մասխադովի ներկայացուցիչ Խիզրի Ալդամովի գրասենյակը փակվել է: Ինքը՝ Ալդամովն ասել է, որ ներկայացուցչությունը չի փակվել, պարզապես փոխվել է հասցեն: Ալդամովի գրասենյակը գտնվում էր Թբիլիսիի կենտրոնում՝ հացամթերքների կորպորացիայի շենքում, իսկ կորպորացիայի ղեկավարն Անզոր Բուրջանաձեն է նախագահ Էդուարդ Շեւարդնաձեի 50 տարիների մտերիմն ու խորհրդարանի նախագահ Նինո Բուրջանաձեի հայրը:

Ինչ վերաբերում է Թուրքիային, Ռուսաստանը պահանջել է փակել չեչենական մի շարք հիմնադրամներ ու կազմակերպություններ, որոնք կազմված են Մոսկվայի Թատերական կենտրոնը գավթած ահաբեկիչների հետ: Ըստ Ինտերֆաքսի գործակալության, խոսքը մասնավորապես «Չեչենա-կովկասյան համերաշխության միության» մասին է: ՌԴ կառավարությունը պնդում է, որ Թատերական կենտրոնում պատանդներ առեւանգած գրոհայիններ հեռախոսազրույցներ են ունեցել մասնավորապես Թուրքիայի բաժանորդների հետ:

Թուրքիայի իշխանությունները դեռ պատասխան չեն տվել ռուսներին: Իսկ «Չեչենա-կովկասյան համերաշխության միության» փոխնախագահ Մուկտեդիր Իլխանը BBC-ի թղթակցին ասել է, թե իր կազմակերպությունն զբաղվում է լոկ պարենի բաշխմամբ:

Մինչդեռ Թուրքիայում Ռուսաստանի դեսպան Ալեքսանդր Լեբեդը նշել է, որ ահաբեկիչները Թատերական կենտրոնից զանգահարել են Թուրքիա, Սաուդյան Արաբիա եւ Միացյալ Արաբական Էմիրություններ: «Չեչենական հիմնադրամները վաղեմի կապեր ունեն ինչպես չեչեն ահաբեկիչների, այնպես էլ «Ալ Ղաիդայի» հետ, հայտարարել է դեսպանը: Նրա խոսքերով, այդ հիմնադրամները ֆինանսավորում են չեչեն անջատականներին:

Դեսպանը նաեւ երեսպաշտական է անվանել թուրքական ՁԼՄ-ներում Մոսկվայի ողբերգական դեպքերի լուսաբանումը: Թուրքիայի ԱԳՆ հայտարարության մեջ հավաստվում է, թե Թուրքիան կողմ է հակաահաբեկչական պայքարին: Միաժամանակ խոստովանություն է արվում, որ «մի շարք կուսակցությունների հայտարարությունները հարգանքի տակ են դնում Թուրքիայի մոտեցումը մոսկովյան ահաբեկչություններին»:

Պատանդների մեջ էր Ինտերֆաքսի աշխատակցուհի Օլգա Չեռնյակը, որը լսել է ահաբեկիչների խոսակցությունը չեչեն ավազակապետ Շամիլ Բասաեւի հետ: Պատանդներն ահաբեկիչների մի հեռախոսազանգից հետո բջջային հեռախոսի վրա նկատել են Թուրքիայի միջազգային կոդը:

Թուրքիայում չեչենական բավական մեծ գաղութ կա. այդ երկրում մոտ 25 հազար չեչեն է բնակվում:

«Ազգի» միջազգային բաժին

ՀԱՄԱՌՈՏ

Ռուսաստանը փնտրում է Մասխադովին, Յանդարբիեւին, Մախաշեւին, Նուխիեւին

Սիմեդ Չաֆաեւի՝ Դանիայում ձերբակալվելուց հետո, Ռուսաստանը եւս չորս չեչեն անջատողականների միջազգային հետախուզում է հայտարարել: ՌԴ գլխավոր դատախազի տեղակալը «Ինտերֆաքսին» ասել է, որ փնտրվում են Ասլան Մասխադովը, Զելիմխան Յանդարբիեւը, Կազբեկ Մախաշեւը եւ Խոջահմեդ Նուխիեւը: Ըստ ռուսական ՁԼՄ-ների, չի բացառվում, որ վերոնշյալ անձինք բանվում են Վրաստանում, Ադրբեջանում, Թուրքիայում կամ արաբական ծիր

Մշակույթ

Հայաստանի պետական կամերային նվագախումբը՝ Երևանից Բեռլին

Նոյեմբերի 4-ին Բեռլինի Ֆեստիվալգրաբեն դալատում ելույթ կունենա Հայաստանի պետական կամերային նվագախումբը՝ սկիզբ դնելով Արամ Խաչատրյանի 100-ամյակին նվիրված միջազգային տոնակատարություններին:

– Սա, իսկապես, մեծ դասիվ է, ասում է նվագախմբի գեղարվեստական դեկավար եւ գլխավոր դիրիժոր Արամ Ղարաբեկյանը, հեռեւաբար ավելի մեծ է դասախանատվության զգացումը:

Ամանդաբար, հյուրախաղերի գնալուց առաջ մենք տվյալ ծրագիրը ներկայացնում ենք Հայաստանի հանդիսատեսին: Այս անգամ էլ բացառություն չեղավ, եւ նոյեմբերի 29-ին բեռլինյան համերգի ծրագիրը կատարվեց Հայաստանում: Գերմանացի հանդիսատեսին ես համադարփակ ծրագրով ենք ներկայացնում Հայաստանը: Երաժշտական-ստեղծագործական ամեն կողմերով: Երբ ստեղծագործական սերունդ, ժամանակակից միջին սերունդ, հանձին Էդվարդ Հայրապետյանի («Կորուսյալ օդաղարիկ» ստեղծագործությունը նա գրել է 1998 թ-ին հատուկ մեր նվագախմբի համար), ժամանակակից ավագ սերունդ՝ Էդվարդ Սիրգոյան, Վարիացիաներ լարային նվագախմբի համար (այս ստեղծագործությունն աշխարհով մեկ հնչեցրել ենք, բացառությամբ Գերմանիայի) եւ Արամ Խաչատրյան: Իսկ ինչպե՞ս ներկայացնել Խաչատրյանին, քանի որ նա որեւէ կամերային ստեղծագործություն չի գրել, շարունակում է մնալ Ղարաբեկյանը: Խիզախ քայլ արեցինք, դիմեցինք կոմպոզիտոր Ռուբեն Ալթունյանին, բազում քննարկումներ եւ զրույցներ ունեցանք, արդյունքում ծնվեց «Խաչատրյան» անվանումով մի ծավալուն գործ: Արամ Խաչատրյանի ամենանշանավոր ստեղծագործությունների շաղկապված համաստեղումը՝ մեկ ընչով, փոխադրված լարային նվագախմբի համար: Մեծ դասախանատվությամբ էի սպասում այս քայլի արձագանքին, եւ հոկտեմբերի 29-ի համերգին հանդիսատեսի ոգեւորությունը մեզ խանդավառեց: Արամ Խաչատրյանին ներկայացնել նոր հանդերձանքով, կրկնում եմ, շատ դասախանատու եւ խիզախ քայլ է: Բեռլինյան համերգին ներկայացնելու ենք նաեւ գերմանական երկու դասական՝ Մոցարտ եւ Բախ: Հատկանշական է, որ Բախի կոնցերտի ժամանակ մեզ հետ որդես մենակատար համագործակցելու է 13-ամյա Նարե Արղամանյանը: Հենց նա էլ խորհրդանշելու է մեր արդագա սերունդը, իսկ կոմպոզիտոր Էդվարդ Սիրգոյանի ներկայությունն այդ համերգին վկայությունն է մեր ավագ դասականի հանդեպ խորագույն հարգանքի:

Հայաստանի պետական կամերային նվագախումբը բեռլինյան համերգի նախօրեին առիթ է ունենալու ունկնդրել Բեռլինի ֆիլհարմոնիկի ելույթը, իսկ հաջորդ օրը Ֆեստիվալգրաբեն դալատում, որտեղ բոլոր դասատնական արարողություններն ու միջոցառումներն է անցկացնում Գերմանիայի կանցլեր Շրյոդերը, կամերային նվագախումբը կվառի Արամ Խաչատրյանի 100-ամյակի տոնակատարությունների ջահը՝ Հայաստանի եւ Գերմանիայի առաջին տիկնաց՝ Բելա Քոչարյանի եւ Քրիստինա Ռաուի բարձր հովանավորությամբ եւ ներկայությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄԵՐԱՅԻՆ ՆՎԱԳԱԽՈՒՄԲԻ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Անծանոթ Հայաստան

Վլադիմիր Սարոյանի բացիկների հավաքածուն

Ինչպես ես զգում երկիրդ եւ նրա գեղեցկությունները եւ ինչպես է արթնանում սերն առ երկիրդ, որտեղ ապրում ես մի կյանք՝ հավերժություն կամ ակնթարթ եւ կարող է հաճախ չնկատես կողքիդ թեկուզ անհնար թվացող երեւույթների հմայքը, ասենք մի ծառի՝ կարմիր հատապտուղներով, մի կայաղակի, կամ կիրճի մի անկյունի: Ապրում ես, կողքով անցնում ու չես նկատում:

Վլադիմիր Սարոյանի լուսանկարչական հայացքն ու զգացողությունն այս առումով անկրկնելի է, իր լուսանկարներում Հայաստանն անգուգական գեղեցկությունների հրաշալիք է: Մեր լեռնաշխարհն այս լուսադաստակերներում բնաշխարհի իր բազմազանությամբ առավել է առինքնող՝ ծնդաս լեռների սառնաշունչ վեհությամբ, լճերի խորհրդավոր լռությամբ, կիրճերի զարմանալի գունագեղությամբ: Եվ որովհետեւ բառերը երբեմն անհարկի շռայլ են թվում (որոնց հակված ենք մակդիրներ կոչելու) ինքներդ թերթեք Վլ. Սարոյանի «Անծանոթ Հայաստան» բացիկների բավական ինքնատիպ հավաքածուն: Վստահ եմ, որ այդ անծանոթ հատվածը երկիրը կդառնա միանգամից ծանոթ ու նաեւ սիրելի:

Ըստ լուսանկարչի, Հայաստանը գրեթե միշտ ներկայացվել է իբրեւ խաչքարերի, եկեղեցիների ու վանքերի երկիր, իր այս հավաքածուում մեր երկիրը ներկայացված է բնաշխարհային եւ կլիմայական բազմազանությամբ:

Լուսանկարները արված են բարձր դրոֆեսիոնալիզմով ու ճաշակով, գեղագիտական նուրբ զգացողությամբ: Բացիկների հավաքածուն գրքույկի տեսքով է ներկայացված (իր տեսակի մեջ առաջինը մեզանում) եւ բովանդակում է Հայաստանի մասին աշխարհագրական, բնակլիմայական բնույթի տվյալներ: Լուսանկարների մեկնաբանությունները ճանաչողական նշանակություն ունեն: Այստեղ կգտնեք Հայաստանի լեռների, կիրճերի, անտառների, ալպիական մարգագետինների, կենդանական եւ բուսական աշխարհի մասին հետաքրքրական տեղեկություններ: Այսպես. «Զանգեզուրի լեռնաշղթան Հայաստանում ամենաբարձրը եւ ամենաերկարն է: Գագաթների մեծ մասը 3700 մետրից բարձր է: Լեռնաշղթան հարուստ է բազմաթիվ գեղատեսիլ լճերով՝ Գազանալիճ, Գոգի, Կաղուտան եւ այլն: Բեզոարյան այծերի, գայլերի, անգամ հովազների բնակվելու արեալն է»:

Վլ. Սարոյանը վերստին է ծանոթացնում մեր լեռնաշխարհին, նորովի, ուրույն նրբերանգներով, այնպես, որ իր այս լուսանկարներով կարելի է սիրահարվել Հայաստանին, այն յուրատեսակ հրավեր է զբոսաշրջիկներին եւ դեռի մեր երկիր կարող է նրանց մեջ հետաքրքրություն առաջացնել: Տեքստը հայերեն եւ անգլերեն է, լուսանկարները կարելի է օգտագործել իբրեւ բացիկներ, իսկ բարձրորակ տպագրությունն իրականացրել է «Փրինթինֆո» հրատարակչատունը:

ՄԵԼՈՆԱ ԲԱԴԱԼՅԱՆ

«Կիլիկիայի հայկական մասունքները»

Կարապետ Գալֆայան ընտանիքի նախաձեռնությամբ եւ Հունաստանում հայկական եկեղեցու անմիջական օժանդակությամբ Աթենքի Բենակի թանգարանը երեկ իր դահլիճներում «Կիլիկիայի հայկական մասունքները» ընդհանուր խորագրով ցուցահանդես է բացել, որտեղ ներկայացված են, ըստ ստացված տեղեկատվության, Կիլիկիայի հայերի պատմությունն ու արվեստը՝ սկսած 12-րդ դարում Փոքր Հայքի թագավորության հիմնադրումից մինչեւ 1915 թ. ողբերգական իրադարձությունները: Ցուցանմուշների թվում են մոտ 80 իրեր, որոնք Սիսից Հալեպ, իսկ այնուհետեւ Անթիլիաս են տեղափոխել բռնագաղթածները, ինչպես նաեւ 12-14-րդ դդ. 3 ձեռագրեր՝ Վենետիկի Մխիթարյաններից, մետաղադրամներ եւ եկեղեցական իրեր ու հանդերձանք:

Ցուցահանդեսը, որը գործելու է մինչեւ դեկտեմբերի 9-ը եւ բաց է լինելու ամեն օր, բացի երեքշաբթի օրերից, կազմակերպել է «Մարիա Պանայիոտես արտրոդակենց» ՍՊԸ-ն, ձեւավորել է թանգարանի աշխատակիցներից Ստեփան Ղանոսը: Գլխավոր հովանավորներն են Հունաստանի մշակույթի նախարարությունը եւ Կոստոպուլոս հիմնարկությունը՝ Հունաստանի հայկական եկեղեցու, «Ալֆա» ազգահավաքական ընկերության եւ «Կարավիաս» ասոցիացիայի օժանդակությամբ:

Ցուցահանդեսի առթիվ անգլերենով եւ հունարենով հրատարակվել է լուսանկարչական շքեղ մի կատալոգ, որտեղ հոդվածներով հանդես են եկել Կիպրոսի համալսարանի թուրքական ուսումնասիրությունների բաժնի դրոֆեսորի ասիստենտ Թոմ Սինկլերը, Նյու Յորքի Մետրոպոլիտեն արվեստի թանգարանի կուրատոր Հելեն Էվանսը, Սորբոնի բարձրագույն ուսումնասիրությունների գործնական դպրոցի աշխատակիցներից Իոաննա Ռաֆթին եւ Բենակի թանգարանի հետբյուզանդական արվեստի բաժանմունքի կուրատոր Աննա Բալյանը:

Հ. Ծ.

ՄԵԾԱՐՈՒՄ

Հեռուստաօպերատոր Սուրեն Մուրադյան՝

45 տարի նկարահանման խցիկն ուսին

1956 թվականին Երեւանում սկսեց գործել հայկական հեռուստատեսությունը:

Երկու տարի անց հայկական հեռուստատեսություն եկավ մի եռանդուն, վառվռուն երիտասարդ եւ ասաց, որ ուզում է աշխատել հեռուստատեսությունում: Այդ դահին նրա մտքով անգամ չէր անցնում, որ հայկական հեռուստատեսության հետ կապվելու է ընդմիշտ: Ու այդպես՝ 45 տարի:



Հիմա այդ երիտասարդը դարձել է 65 տարեկան, եռեւում ստեղծագործական բերկրանքի ու հաջողությունների մի վիթխարի ճանապարհ է մնացել, որը, սակայն, կանգ չի առել եւ շարունակվում է:

Հեռուստատեսությունում ասացին՝ լուսավորող դիտի աշխատես, բայց դա երկար չտեւեց, որովհետեւ նկարահանման մի քանի փորձերից հետո ավագները՝ Ստեփան Մարտիրոսյանը, Լաերտ Պողոսյանը եւ մյուսները նկատեցին, որ իրենց կողքին օպերատորական գործի խոստումնալից կադր է հայտնվել: Ու օգնեցին, աջակցեցին ինչքան որ կարող էին, աջակցեցին սիրով, ավագության բարի կանոններով:

Եվ եղավ օպերատորը, այսօր արդեն՝ օպերատորը 150 հեռուստաֆիլմի: Սրանք՝ միայն ֆիլմերը: Սոսրյա հաղորդումները դժվար է թվարկել: Խոսքերով հեշտ է ասել 150, եկեք, դատկերացնենք մի դահ, թե ինչքան անհուն գիշերներ նում: Այդ դահին նրա մտքով անգամ չէր անցնում, որ հայկական հեռուստատեսության հետ կապվելու է ընդմիշտ: Ու այդդես՝ 45 տարի:

Հիմա այդ երիտասարդը դարձել է 65 տարեկան, եռեւում ստեղծագործական բերկրանքի ու հաջողությունների մի վիթխարի ճանապարհ է մնացել, որը, սակայն, կանգ չի առել եւ շարունակվում է:

Հեռուստատեսությունում ասացին՝ լուսավորող դիտի աշխատես, բայց դա երկար չտեւեց, որովհետեւ նկարահանման մի քանի փորձերից հետո ավագները՝ Ստեփան Մարտիրոսյանը, Լաերտ Պողոսյանը եւ մյուսները նկատեցին, որ իրենց կողքին օպերատորական գործի խոստումնալից կադր է հայտնվել: Ու օգնեցին, աջակցեցին ինչքան որ կարող էին, աջակցեցին սիրով, ավագության բարի կանոններով:

Եվ եղավ օպերատորը, այսօր արդեն՝ օպերատորը 150 հեռուստաֆիլմի: Սրանք՝ միայն ֆիլմերը: Սոսրյա հաղորդումները դժվար է թվարկել: Խոսքերով հեշտ է ասել 150, եկեք, դատկերացնենք մի դահ, թե ինչքան անհուն գիշերներ

Ստեղծագործական կյանքի հիշարժան տարեթվեր

1958 թվական. Աշխատանքի է անցել հայկական հեռուստատեսությունում:

1963 թվական. Ավարտել է Մոսկվայում առաջին անգամ կազմակերպված կինոօպերատորական կուրսերը:

1964-1968 թթ. Ավարտել է Երեւանի պետական համալսարանի ժուռնալիստիկայի բաժինը:

1975 թվական. Նկարահանել է հայկական հեռուստատեսության առաջին գունավոր տեսաֆիլմը (Ա. Շտոկ «Սասանայի ջրաղացը», Ռուբեն Հախվերդյանի դիտյոմային աշխատանքը), որի համար Մոսկվայում նրան շնորհվել է բարձրակարգ հեռուստաօպերատորի կոչում եւ տրվել հեռուստատեսության գերազանցիկի մեդալ:

1979 թվական. Ավարտել է որակավորման Մոսկվայի բարձրագույն ինստիտուտը:

1974 թվականից նկարահանել է համաշխարհային եւ միջազգային բազմաթիվ մրցումներ, համաշխարհային օլիմպիական, բարի կամքի, բարեկամության խաղեր եւ համաշխարհային փառատոներ, արժանացել դարգեւների:

Ս. Մուրադյանի հետ աշխատել են 10 ռեժիսորներ, որոնք արժանացել են արվեստի վաստակավոր գործչի կոչման, ինքն ունեցել է թատերական ինստիտուտի ռեժիսորական ֆակուլտետի 10 դիտյոմնիկներ:

Այսպես են գնահատում Սուրեն Մուրադյանին.

Ռուբեն Հախվերդյան. Մի քանի խոսքով անհնարին է ներկայացնել, թե ինչ տեսակ մարդ է Սուրեն Մուրադյանը: Որդես բարոյական կերպար շատ սիրված անձնավորություն է շրջապատում: Երբ որոշեցի բեմադրել «Սասանայի ջրաղացը», եւ հանձնարարեցին, որ Սուրենը լինի գլխավոր օպերատորը, իմ բոլոր փորձերը, որ նա դիեսը կարդա, անհաջողության մատնվեցին. շերը նստած էինք իր տանը, դե, եթե «էինք»՝ ինքը, ես, մեր նախկին հարեւան Ռոբերտը, ուրիշներ, նշանակում է «էին» նաեւ շերն իրենց դարունակությամբ: Երաժշտություն էինք միացրել կես գիշերին, խանգարելով նաեւ դիմացի հարեւանների, այդ թվում՝ Աշուղ Աշոտի քունը: Մեկ էլ, չգիտեմ ինչ փչեց Սուրենի գլխում, երբ սա հավաքեց մեր հրաշալի ընկեր, երգի մեծ վարպետ Ռուբեն Մաթեւոսյանի հեռախոսի համարը. «Ռուբիկ, նստած ենք տղերքով, ի՞նչ ես ասում: Դե, ես եմ, Վանիկն է»... Ու լսափողը վայր դրեց:

Քիչ անց ճնաթաթախ Մաթեւոսյանը մեր սեղանի քով նստած էր:

Մինչեւ առավոտ զրուցում էինք ու երգում...

...Այսօր Սուրեն Մուրադյանը 65 տարեկան է: Ես ցանկանում եմ ասել.

–Ողջո՛ւյն քեզ, իմ բարեկամ, տաղանդավոր վարպետ Սուրեն Մուրադյան:

ՎԱՆԻԿ ՍԱՌՈՅԱՆ

Արմենպրեսս լրատվական գործակալության գիտամշակութային եւ մարզական լրատվության բաժնի վարիչ

յոթ անգամ նրա տուն գնացի, յոթ անգամ էլ չկարդաց. ինձ խմեցնում ու ճամփու էր դնում: Բայց երբ սկսեց նկարահանել, հենց տեղում հանդարտվեց, ես նոր միայն նկատեցի, թե ինչ է դրոֆեսիոնալը:

Հավասիկ մի մարդ, որը մեր հեռուստատեսության սյուներից է եղել եւ կա, եւ ես ուրախ եմ, որ մեր բարեկամությունը շարունակվում է:

Ռուբեն Մաթեւոսյան. Սուրեն Մուրադյանը ինձ համար թանկ անուն է: Նրա խցիկի առջեւ բազմիցս կանգնել են եւ նրա շնորհիվ բազմահազարանոց հեռուստալսարան մտել մեր մշակույթի եւ սպորտի վարպետները: Ուրախ եմ, որ նա նաեւ իմ համալսարանական ընկերն է, մենք միասին ենք սովորել Երեւանի պետական համալսարանում:

Ամենաեղ դայմաններում նա փառահեղ նկարահանումներ է կատարել, փառահեղ բեմադրություններ իրականացրել:

Ուրախ եմ, որ նա իմ ընկերն է, իմ սերնդի ներկայացուցիչը, ուրախ եմ, որ տարիքը անկարող է եղել «ծերացնելու» Սուրեն Մուրադյանին. նա այսօր էլ առույգ է, աշխույժ եւ նկարահանման խցիկը միշտ ուսին:

Մերուժան Տեր-Գուլանյան. Սուրեն Մուրադյանը եւ հրաշալի մարդ է, եւ աշխատունակ, շատ լավ այլ ունեցող, մեծ փորձ ունեցող օպերատոր: Նա այն մարդկանցից է, որոնց աշխատանքային տարիները փորձ են, այլ ոչ թե սպաժ, նրա դարագայում, դրոֆեսիոնալիզմը չի կարելի խառնել սպաժի հետ: Նա իր էներգիայով, ներդաշնակ աշխատանքով, նկարագրով օրինակ է հանդիսանում շատերի համար:

Վարսիկ Գրիգորյան. Նրա օպերատորական նկարագրին խիստ բնորոշ է ժամանակի զգացողությունը, կյանքի անտիպ տրփյունին հետեւելը...Նրա օպերատորական «ձեռագրին» հատուկ է անհանգիստ, հումորիկ լեզուն:

AUSTRIAN AIRLINES

The Most Friendly Airline.

«Ինգում» Հայաստանի եւ Ռուսաստանի շախմատիստներն են

Ռեպորտաժ «Ավստրիական ավիաուղիների» աջակցությամբ

ԳԱԳԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ հաղորդում է Բլեդից

5-րդ տուրում ես որոշ ուշացումով մտա մրցարան: Լյուբլյանայի քաղաքապետ տիկին Վիկա Պոտոչնիկն այդ օրն ընդունեց ՖԻԴԵ-ի մի խումբ պաշտոնատարների՝ պատվավոր նախագահ Ֆլորենսիո Կամպոմանեսին, առաջին փոխնախագահ Գեորգիոս Մակրոպուլոսին, շախմատի եվրոպական միության նախագահ Բորիս Կուտինին եւ տղերիս հեղինակին: Զրույցի ժամանակ տիկին Պոտոչնիկը նկատեց, որ Սլովենիան երջանիկ երկիր է Հայաստանի շախմատիստների համար: Հենց Լյուբլյանայում 1995 թ.-ին «Երեւանը» նվաճեց եվրոպական ակումբների չեմպիոնների գավաթը:

Մտնելով մարզադահլաս, տեսա սղասված պատկերը. պարաններով արգելափակված տարածքը, որը բոնցֆամարտի ռինգ էր հիշեցնում, եւ որտեղ մրցում են առաջատար թիմերը, շրջապատված էր չորս կողմից: Բոլորը կլանված հետեւում էին Հայաստան-Ռուսաստան մրցախաղին, մասնավորապես Վլադիմիր Հակոբյանի եւ Գարրի Կասպարովի մրցամարտին: Նշեմ, որ առաջին անգամ ՌԴ հավաքականը հանդես եկավ հիմնական կազմով: Հակոբյանի եւ Կասպարովի մենամարտում հաշտություն կնքվեց արդեն 24-րդ քայլում: Սա աշխարհի ուժեղագույն շախմատիստի՝ օլիմպիադայում կորցրած առաջին կես միավորն էր: Խաղի ավարտից հետո Վլադիմիրն ու Գարրին վերլուծում էին պարտիան: Ոչ ոքի ավարտվեց նաեւ Կարեն Ասրյանի եւ աշխարհի մեկ այլ նախկին չեմպիոնի՝ Ալեքսանդր Խալիֆմանի մրցախաղը: Մյուս երկու խաղաշախակների վրա, որտեղ հայ շախմատիստները խաղում էին սեւերով, երկկողմանի սուր պայքար էր ծավալվել: Գաբրիել Սարգսյանը Բլեդում գործում է վստահ ու համարձակ, բայց փորձի պակասը երբեմն զգացնել է տալիս: Ալեքսանդր Մորոզեւիչն օգտվեց իր պատանի մրցակցի աննկատ սխալներից եւ շահեց խաղը: Բայց փոխարենը հրաշալի գործեց Սմբատ Լպուտյանը, որը զուգակցելով նուրբ դիրքային խաղն ու տակտիկական սպառնալիքները, պարտության մատնեց Ալեքսանդր Գրիշչուկին: Եվ այսպես, արժանապատիվ մրցախաղ աշխարհի ուժեղագույն հավաքականի հետ եւ ոչ ոքի, որն ավելի լավ հեռանկարներ ունեին: Այն բանից հետո, երբ Լիլիթ Մկրտչյանը սեւերով հաշտություն կնքեց Հունգարիայի թիմի առաջատար Ժիդոնիա Վայդայի հետ, թվում էր, թե ՀՀ հավաքականը կարող էր հաղթել միայն գրոսմայստերներից կազմավորված ուժեղ մրցակցին: Հլղայանն ու Գալոյանը շոշափելի առավելություն ունեին Ելենա Դեմբայի եւ Նիկոլետա Լակոշի նկատմամբ: Բայց փոքրիկ վրիպումներ թույլ տվեցին: Ընդ որում, Լիլիթը պարզապես մեկ քայլում կորցրեց թագուհին: Մեր թիմը պարտվեց 0,5-2,5 հաշվով, եւ այժմ 15 հնարավորից ունի 8,5 միավոր:

Կարծես թե վերջնականապես կարելի է խոսել օլիմպիադայի մասնակիցների թվի մասին՝ տղամարդկանց՝ 135 եւ կանանց 90 թիմեր: Զգալի ուշացումով Բլեդ հասան տաջիկները: Բացի կույր եւ խուլ ու համր շախմատիստներից, մասնակցում է նաեւ հաշմանդամների թիմը: Առայժմ Բլեդ չի ժամանել շախմատային թիվ 1 պատանեաստը՝ Կիրսան Իլյումժինովը, որն օրերս հաղթեց Կալմիկիայի նախագահի ընտրություններում, ինչի առիթով շնորհավորական հեռագիր ուղարկվեց նրան: Սպասվում է, որ նա Բլեդ կժամանի այսօր, քանի որ վաղը սկսվում է ՖԻԴԵ-ի կոնգրեսի սկզբնական փուլը՝ հանձնաժողովների աշխատանքը: Ճիշտ է, գլխավոր ասամբլեան, որտեղ կքննարկվեն բոլոր կարեւոր հարցերը եւ կկայանա նախագահի ընտրությունը, կսկսվի միայն նոյեմբերի 7-ին:

«Ռեալին» աստղերն էլ չփրկեցին

Յոթ հանդիպումներով ավարտվեց չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարի 5-րդ տուրը: Հաջորդ փուլի 16 մասնակիցներից 7-ն արդեն հայտնի են: «A» խմբում ուշադրության կենտրոնում առաջատարների՝ «Բորուսիայի» եւ «Արսենալի» հանդիպումն էր: Չնայած առաջինը հաջողության հասան անգլիացիները (տուգանայինից գնդակը խփեց Անրին), սակայն «Բորուսիան» կարողացավ բեկում մտցնել մրցակցությունում եւ հաղթել: Շնորհաւորանք պատրաստությանը, «Արսենալն» էլ «Բորուսիայի» հետ նվաճեց հաջորդ փուլի ուղեգիր, քանի որ դրան հավակնող «Օսերը» խոշոր հաշվով զիջեց «Էյնդհովենին»: Այս թիմերը հաջորդ տուրում պետք է որոշեն, թե ով է հանդես գալու ՈՒԵՖԱ-ի գավաթի մրցաշարում:

«B» խմբում կայացած միակ խաղում «Վալենսիան» հյուրընկալվեցավ հաղթելով «Լիվերպուլին», ապահովեց իր մասնակցությունը 2-րդ փուլին, իսկ ահա անգլիացիներն ուղեգրի համար դեռ պետք է պայքարեն «Բազելի» հետ:

«C» խմբում կենտրոնականը «Ռեալ»-«Ռոմա» հանդիպումն էր: 5 գոլ շարունակ հաղթանակի հաղորդությունը չճաշակած «Ռեալի» կազմում առաջին անգամ խաղադաշտ դուրս եկել թիմի բոլոր աստղերը: Սակայն դա էլ բավարար չէր իտալացիներին ծնկի բերելու համար: «Ռոմա»-ն իր հերթին ընտրել էր հարձակողական խաղաոճ՝ առջեւի գծում խաղադաշտ դուրս բերելով Տոտիին, Դելվեկիոյին եւ Մոնտելային: Ֆաբիո Կապելլոյի մարտավարությունը ցանկալի արդյունք տվեց. 27-րդ րոպեին Տոտիի խփած միակ գնդակը հաղթանակ պարգեւեց իտալացիներին, որոնք գործնականում ապահովեցին իրենց տեղը խմբային 2-րդ մրցաշրջանում: Հունական ԱԵԿ-ին ոչ մի կերպ չի հաջողվում մրցաշրջանում առաջին հաղթանակը տանել: «Գենկի» հետ խաղում նույնիսկ տան պայմանները չօգնեցին հաջողության հասնելու: Ավելին՝ հյուրերի առաջին իսկ վտանգավոր գրոհն ավարտվեց Սոնկի դիպուկ հարվածով: Ճիշտ է, շուտով Լակիսը վերականգնեց հավասարակշռությունը, բայց ավելին անել հույներին չհաջողվեց: «D» խմբի առաջատար «Լիոնը» «Այաքսի» նկատմամբ հաղթանակ տոնելու դեպքում կարող էր ժամկետից շուտ նվաճել ուղեգիրը: Բայց սեփական հարկի տակ «Լիոնը» պարտվեց, որով բավական դժվարացրեց իր խնդիրը: Ճիշտ է, իր «սեւ» գործն արեց հույն մրցավար Կիրոս Վասարասը, որը չնկատեց, թե ինչպես 41-րդ րոպեին «Այաքսի» պաշտպան Կիվուն գնդակը դուրս հանեց դատարկ դարպասից, երբ այն արդեն հասել էր դարպասային գիծը: 62-րդ րոպեին մրցավարը դաշտից հեռացրեց Կիվուին, բայց դա էլ չօգնեց «Լիոնին» հավասարեցնելու հաշիվը: Ավելին՝ խաղավերջում հոլանդացիները կրկնապատկեցին հաշիվը: «Ինտերը» հաղթելով «Ռուսենբուրգին», պայքարը շարունակելու լավ հնարավորություն ստացավ:

Խաղերի արձանագրություններից

«A» խումբ

«Բորուսիա»-«Արսենալ» 2-1

0-1 Անրի (18), 1-1 Ժիլբերտու Սիլվա (38, ինքնագոլ), 2-1 Ռոսիցկի (62 11 մ):

«Էյնդհովեն»-«Օսեր» 3-0

Բրյուգինկ (34), Ռոմեդալ (48), Ռոբեն (64):

«B» խումբ

«Լիվերպուլ»-«Վալենսիա» 0-1

Ուֆետե (34):

«C» խումբ

ԱԵԿ-«Գենկ» 1-1

0-1 Սոնկ (22), 1-1 Լակիս (30):

«Ռեալ»-«Ռոմա» 0-1

Տոտի (27):

«D» խումբ

«Ինտեր»-«Ռուսենբորգ» 3-0

Ռեկոբա (32), Սաարինեն (52, ինքնագոլ), Կրեսպո (72):

«Լիոն»-«Այաքս» 0-2

Պիենար (7), վան Դեր Վաարս (90):

ՄՐՑԱՇԱՐԱՅԻՆ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

«A» խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Բորուսիա	5	3	1	1	8-6	10
2. Արսենալ	5	3	0	2	9-4	9
3. Էյնդհովեն	5	1	2	2	5-8	5
4. Օսեր	5	1	1	3	3-7	4

«B» խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Վալենսիա	5	4	1	0	14-4	13
2. Լիվերպուլ	5	2	1	2	9-5	7
3. Բազել	4	1	2	1	7-9	5
4. Սպարտակ	4	0	0	4	1-13	0

«C» խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Ռեալ	5	2	2	1	14-6	8
2. Ռոմա	5	2	2	1	2-3	8
3. ԱԵԿ	5	0	5	0	6-6	5
4. Գենկ	5	0	3	2	1-8	3

«D» խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Ինտեր	5	2	2	1	10-7	8
2. Այաքս	5	2	2	1	5-3	8
3. Լիոն	5	2	1	2	11-8	7
4. Ռուսենբորգ	5	0	3	2	3-11	3

ԹԵՆԻՍ

Սաֆինն անհարմար մրցակից է

Փարիզում անցկացվող թենիսի մրցաշարում Դավիթ Նալբանդյանին այդպես էլ չհաջողվեց լուրջ դիմադրություն ցույց տալ Մարատ Սաֆինին: Վերջինիս ընդամենը մեկ ժամ պահանջվեց Նալբանդյանին հաղթելու համար (6-3, 6-2): Դա մրցակիցների չորրորդ հանդիպումն էր, ընդ որում բոլորն էլ կայացել են ընթացիկ մրցաշրջանում եւ ավարտվել ռուս թենիսիստի հաղթանակով: Առաջին հանդիպումը կայացել էր ադրիլին Մոնտե Կառլոյում, երկրորդը՝ Ռոլան Գարոսի մրցաշարում: Վերջին մրցախաղը տեղի էր ունեցել Մոսկվայում Դեւիսի գավաթի խաղարկությունում, եւ կրկին հաջողությունն ուղեկցել էր Սաֆինին (7-6, 6-7, 6-0, 6-3): Այնպես որ, Սաֆինը Նալբանդյանի համար անհարմար մրցակից է:

Այս հաղթանակի շնորհիվ Սաֆինն ապահովեց իր մասնակցությունը տարեվերջին Շանհայում կայանալիք աշխարհի ոչ պաշտոնական առաջնությանը, որի ուղեգիրը մինչ այդ նվաճել էին արդեն Լլեյթոն Հյուիթն ու Անդրե Ագասին: 2-րդ փուլի արգելքը հաղթահարեցին նաեւ Սրիչափիսանը, Պավելը, Հենմանը, Գրոժանը, Ֆեդերերը, Հասսը, Մոյան, Էսկուդեն, Ռոդիկը, Յուհանսոնը եւ Կանյասը:

Մրցանակը Գելֆանդին

Ֆրանսիական Կաղ դ'Ազե քաղաքում ավարտվեց արագ շախմատի ավանդական մրցաշարը, որին մասնակցեցին 16 շախմատիստներ: Բոլոր արգելքները հաջողությամբ հաղթահարեցին եւ եզրափակիչում գլխավոր մրցանակը վիճարկելու իրավունք ստացան աշխարհի 12-րդ չեմպիոն Անատոլի Կարպովն ու Բորիս Գելֆանդը: Կարպովը, որը մրցաշարում հիանալի էր հանդես գալիս, Գելֆանդի հետ անցկացրած 2 պարտիաներում էլ պարտվեց:

Կգործի կանանց ֆուտբոլի մարզադպրոցը

Երեւանի առեւտրատնտեսական քոլեջի «Քոլեջ» մարզակումբում շուտով տեղի կունենա Հայաստանում կանանց մասնագիտացված առաջին մարզադպրոցի բացման հանդիսավոր արարողությունը: Վերջին 3 տարիներին կանանց ֆուտբոլը հանրապետությունում զարգացում է ապրում: Մեր աղջիկները մասնակցել են Գերմանիայում, Նորվեգիայում, Ուկրաինայում անցկացված միջազգային մրցաշարերի, ներկայումս էլ պատրաստվում են եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարին: Նշենք, որ մարզադպրոցը գործելու է ՀՀ ֆուտբոլի ֆեդերացիայի հովանու ներքո, իսկ Հայլա Գրիգորյանը բացի քոլեջի եւ ֆուտբոլի ակումբի տնօրենի պաշտոնից, զբաղեցնում է նաեւ կանանց ֆուտբոլի Հայաստանի ասոցիացիայի նախագահի պաշտոնը: Անկասկած, մարզադպրոցի առկայությունը թույլ կտա որակյալ ֆուտբոլիստուհիներ պատրաստել: Ի տարբերություն շատ մարզօջախների, մարզադպրոցը կապահովի իր սաների հանդերձանքը: Այստեղ հաճախողները կարող են ե՛ւ սովորել, ե՛ւ մարզվել: «Քոլեջ» մարզական ակումբը շատերին է մեծ սպորտի եւ կյանքի ուղեգիր տվել: Քոլեջի ղեկավարության խրախուսելի նախաձեռնությունն, անշուշտ, կխթանի կանանց ֆուտբոլի զարգացմանը մեր հանրապետությունում:

Բլաթերը կղեկավարի եւս 4 տարի

ՖԻՖԱ-ի նախագահ Զեպ Բլաթերը, որն այդ պաշտոնում վերընտրվեց այս տարվա ամռանը Ճապոնիայում եւ Հարավային Կորեայում կայացած ֆուտբոլի աշխարհի առաջնության ժամանակ անցկացված կոնգրեսում, հայտարարել է, որ 2006 թ. այլեւս իր թեկնածությունը չի առաջադրելու նախագահական ընտրություններում: 2006 թ. լրանում է Բլաթերի 70-ամյակը, եւ նա գտնում է, որ այդ տարիքում պետք է հեռանա ՖԻՖԱ-ի նախագահի պաշտոնից:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ (IFB)

Ամսաթիվ՝ *հոկտեմբերի 3, 2002*
Պայմանագրի No՝ *JR/W.2/007*
Համաշխարհային բանկի վարկ՝ *No 3417 AM*
Վարկի անվանումը՝ *Դասաիրավական բարեփոխումների ծրագիր*

1. Հայաստանի Հանրապետությունը Միջազգային զարգացման ընկերակցությունից (IDA) ստացել է վարկ դասաիրավական բարեփոխումների ծրագրի ծախսերի համար եւ նախատեսում է օգտագործել այդ միջոցների մի մասը «Վերաքննիչ դատարանների շենքի վերակառուցում» JR/W2/007 պայմանագրով անհրաժեշտ վճարումներ կատարելու համար:
2. ՀՀ արդարադատության նախարարության «Դասաիրավական բարեփոխումների ծրագրի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը հրավիրում է բոլոր շահագրգիռ, իրավասու շինարարական կազմակերպություններին ներկայացնել հայտեր **«Վերաքննիչ դատարանների շենքի վերակառուցում» JR/W2/007** պայմանագրի իրականացման մրցույթին:
3. Մրցույթային փաթեթները կարելի է ձեռք բերել **հոկտեմբերի 4-ից** մինչեւ **նոյեմբերի 11-ի ժամը 18:00՝** տեղական ժամանակով, փաթեթի համար վճարելով 200 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ եւ փոստային առաքման դեպքում 250 ԱՄՆ դոլար անփոխհատուցելի գումար հետեւյալ հաշվի օգտին
HSBC բանկ Հայաստան, հաշիվ 001-124346-003:
Փոստային առաքումն իրականացվում է օդային ճանապարհով:
Շահագրգիռ մասնակիցները կարող են գնել մրցույթային փաթեթը, ծանոթանալ մանրամասներին եւ ստանալ տեղեկություններ հետեւյալ հասցեով
ք. Երեւան, ՀՀ արդարադատության նախարարություն,
«Դասաիրավական բարեփոխումների ծրագրի իրականացման գրասենյակ» ՊՀ,
Վ. Սարգսյան 3, հեռ. 545689, 545682
4. Հայտերն ուժի մեջ կմնան բացման օրվանից **120 (հարյուր քսան)** օրվա ընթացքում եւ պետք է ուղեկցվեն 14,100 **(տասնչորս հազար հարյուր)** ԱՄՆ դոլար, կամ համարժեք ՀՀ դրամով գումարի չափով, մրցույթին մասնակցելու երաշխիքով:
5. Հայտերի գնահատման ժամանակ տեղական կազմակերպությունները կունենան 7 1/2 տոկոս արտոնություն:
6. Հայտը 1 բնօրինակ եւ 2 պատճեն պետք է ներկայացվեն
ք. Երեւան, ՀՀ արդարադատության նախարարություն,
«Դասաիրավական բարեփոխումների ծրագրի իրականացման գրասենյակ» ՊՀ,
Վ. Սարգսյան 3, հեռ. 545689, 545682
հասցեով ոչ ուշ, քան **2002 թ. նոյեմբերի 18-ի ժամը 15:00-ը**:
Հայտերը կբացվեն անմիջապես նույն օրը, ժամը 15:15-ին, ցանկացող հայտատուների ներկայությամբ:
7. Ուշացված հայտերը կվերադարձվեն հայտատուներին չբացված վիճակում:

ՌԱԴԻՈ «ՎԱՆ» ՌԱԴԻՈ «ՎԱՆ» ՌԱԴԻՈ «ՎԱՆ» ՌԱԴԻՈ

RADIO VAN FM 103

Радиостанция "Радио ВАН"

Реклама-двигатель торговли, это сказали не мы!

Лучшая аудиореклама региона, о нас знают даже в Сибири.

Аудиореклама на любом языке и в любые удобные для Вас сроки.

Изготовление и размещение телерекламы.

Баннеры на нашем сайте (www.magistros.am/van/).

Что Вам нужно, просто позвонить по телефону 540002

Все остальное сделаем мы!

РЕКЛАМНАЯ СЛУЖБА "РАДИО ВАН"

ՌԱԴԻՈ «ՎԱՆ» ՌԱԴԻՈ «ՎԱՆ» ՌԱԴԻՈ «ՎԱՆ» ՌԱԴԻՈ

☎ 529353 ԱՆՎՃԱՐ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- **Փոխանակում եմ** փոքր կենտրոնում գտնվող սեփականացրած 80 քմ տարածքս սեփական տան հետ, հեռ. 09 423833, Արթուր:
- **Վաճառվում է** բժշկական ջերմաչափ-ռեգիստրող սարք (ухажор), բժշկական բոռ մեքենա, 2 գերմանական միկրոալիքային վառարանով, հեռ. 26 54 50, 19:00-ից հետո:
- **Փոխանակում եմ** Москвич 2140 ավտոմեքենան առանց տեխնիկական օգնության, նորմալ վիճակի Жигули կամ լավ Запорожец մեքենայի հետ, հեռ. 46 45 12, 18:00-ից հետո:
- **Փոխանակում եմ** 4 սենյականոց բնակարանս (2 սան հանգույցով), 2 եւ 1 սենյականոց բնակարանի հետ կենտրոնում, հեռ. 55 37 25, Վիլեն:
- **Վաճառում եմ** 2 սենյականոց բնակարան Կիեւյան կամրջին հարող հինգ հարկանի քառաբեն տան երկրորդ հարկում, սենյակներն առանձին մուտքով, կախովի եւ փակ տնտեսական պատշգամբով, մշտական ջուր եւ մեկ տարվա նորոգումով, հեռ. 27 36 56, Հակոբ, Վարդան:
- **Տրվում է վարձով** ստորգետնյա ավտոտնակ 2 մեքենայի համար: Հեռ. 53-31-28, էմմային:
- **Վաճառվում է** հոակայուն աղյուս ռուսական, բարձր որակի, սոիտակ գույնի: Զանգահարել 53-31-28, էմմային:
- Գովազդային լրատվական թերթի խմբագրությունը փնտրում է գործընկեր թերթը համատեղ հրատարակելու նպատակով, հեռ. 26 32 61:

Արժեթղթերի գնման/վաճառքի համար դիմել Հայաստանի Ֆոնդային Բորսայի անդամ բրոքերային ընկերություններին

ԱՐԲԵԲԵՔ ՍՊԸ
ք. Երեւան, Կոմիտաս 22/50
Հեռ. 222725, 278469
ԱԼԻԽԱՆՅԱՆ ԲՐՈՔԵՐ ՍՊԸ
ք. Վանաձոր, Գ.Լուսավորչի 48ա
Հեռ. 41206
ԱԼԻՆՎԵՍԹ ՍՊԸ
ք. Երեւան, Ռոստովյան 21, բն. 41
Հեռ. 454112
ԱՅՍ ԷՔՍԿԱՎԱՑԻՈՆ ՍՊԸ
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 71/27
Հեռ. (051) 22422
ԱՄԵՐԻԱ ԻՆՎԵՍԹ ՓԲԸ
ք. Երեւան, Բաղրամյան պող. 6, բն. 2
Հեռ. 524040, 524140
ԱՐԱՌ ԲՐՈՔԵՐԱՅԻ ՏՈՒՆ ՍՊԸ
ք. Երեւան, Հալաբյան 47, բն. 31
Հեռ. 348837, 277814
ԱՐԴՇԻՆԲՐՈՔ ՍՊԸ
ք. Երեւան, Թումանյան 28/20
Հեռ. 542674
ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ ՍՊԸ
ք. Երեւան, Զաքիյան 8/19
Հեռ. 581578, 566448
ԱՐՄԲՐՈԿ ՓԲԸ
ք. Երեւան, Կորյունի 19/1
Հեռ. 542125
ԵՐԵՎԱՆ-ԲՐՈՔԵՐ ՍՊԸ
ք. Երեւան, Թումանյան 32/16
Հեռ. 544657, (09)400699
ԷՅ-ԲԻ ՍԵԿՅՈՒՐԻԹԻԶ ՍՊԸ
ք. Երեւան, Մաշտոցի 40ա/1
Հեռ. 532815
ԷՍ ԿԱԲՐՈՔ ՍՊԸ
ք. Երեւան, Գայի պող. 57, բն. 15
Հեռ. 640804
ԷՏԱԼՈՆ ԻՆՎԵՍԹ ՍՊԸ
ք. Երեւան, Հանրապետության փող.49/2
Հեռ. 620600
ԿԱՊԻՏԱԼ ԻՆՎԵՍԹ ՍՊԸ
ք. Երեւան, Ագաթանգեղոսի 7
Հեռ. 526417, 569680
Մ.Գ.Ս. ՍՊԸ
ք.Գյումրի, Աբովյան 242-1
Հեռ. 23109, 30868
ՊՐԻՎԱՏ ԻՆՎԵՍԹ ՓԲԸ
ք. Երեւան,Նալբանդյան 50/26
Հեռ. 521812, 528778
ՌԵՆԵՍԱՆՍ ՓԲԸ
ք. Երեւան, Վարդանանց 13
Հեռ. 544527
ՎՐԻՆԿՈ ՍՊԸ
ք. Երեւան, Ամիրյան 24/5
Հեռ. 531805
ՏՈՆԱՏՈՆ ՍՊԸ
ք. Երեւան, Դեղատան 2
Հեռ. 545477, 545407

Armex
Հայաստանի Ֆոնդային Բորսա
Armenian Stock Exchange

2002 թ. հոկտեմբեր 31-ի առեւտրային նստաշրջան

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԳՆԱՆՇՈՒՄ

Թողարկող Issuer	Նշան ABBR	Արժույթ Currency	Առք Bid: լավագույն գին Best price	միջ. կշռ. գին Avg. price	հանրագումար Total qnt.	Վաճառք Ask: լավագույն գին Best price	միջ. կշռ. գին Avg. price	հանրագումար Total qnt.	Կատարված գործարքներ Transactions: նվազ. գին Day low	առավ. գին Day high	միջ. կշռ. գին Avg. price	արժեքի հանրագումար Total qnt.	ծավալ Volume
ԱՄԻՆԱՖԱՍ	ASHB	B											
ԱՄԻՆԱՖԱՍ	ASHBP1	B				2,500.0	2,500.0	21					
ՍՊ ԺԱՌԱՆԳԱՅԻՆ ԳԱԶ	ERJG	B				58,000.0	58,000.0	7					
ՍՊ ԵՍՊԵՍՅԱՆ ԳԻՆԵՍԻՆԻ ԳԱԶ	ESHG	B				2,000.0	2,000.0	30					
ԳԼՈՆՏ	GLNT	B				1,000.0	1,000.0	2,996					
ՀԵԼԻՈՍ ՏՈՒՆԱՏՈՒՆ	HELM	B				37.5	37.5	1,406	350.0	350.0	350.0	303,106,050.0	

Գրանցված գնանշումների ցանկում գրանցված բաժնետոմսերի հայտարարագրերի հարցերով անհրաժեշտ բաժնետոմսերի հարցերով:
4 կետից բաղկացած հարցաթերթի բաժնետիրական ընկերության հասարակ անվանական բաժնետոմսի հարցերում է: Առանձին բաժնետոմսի դեպքում 4 կետից հետո
գալիս է P՝ արտոնյալ բաժնետոմսերի նշան դրանց մասին տեղեկություն հասանելի է CD:
Ամսական ներկայացվում է 165 արժեթղթեր: Տեղեկությունները ներկայացվում են ՀՀՇ-ի բաժնետոմսի դեպքում 4 կետից հետո նշվում է CD:
Ամսական ներկայացվում է 165 արժեթղթեր: Տեղեկությունները ներկայացվում են ՀՀՇ-ում գրանցված այն արժեթղթերի վերաբերյալ, որոնցով նշված առեւտրային
տարվա ընթացքում գրանցվել է գնանշումների հարց կամ գործարք: Բոլոր գնանշումները ներկայացված են ՀՀ դրամով:
Ամսական գրանցված բոլոր արժեթղթերի գնանշման անվանումի արդյունքները հրապարակվում են անհրաժեշտ կարգավորումներ ստանալուց անմիջապես հետո: Տեղեկությունները հրապարակվում են ինտերնետային էջում www.armex.am

© Armex

Ազգ

Գործարարության աջակցության ծրագիր

«Ազգ» օրաթերթը եւ Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցությունը համատեղ ներկայացնում են Հայաստանի գործարարներին անվճար աջակցման ծրագիր:

Եթե դուք սեփականատեր եք կամ ունեք որեւէ բիզնես-առաջարկներ, սակայն Ձեզ հարկավոր են նոր գործընկերներ, ներդնողներ, խորհրդատուներ՝ սեփական գործը զարգացնելու համար, ապա «Ազգ» օրաթերթի ինտերնետ տարբերակի բազմահազար ընթերցողներին, 70-ից ավելի երկրներում կներկայացնենք Ձեր բիզնես-առաջարկները, որոնք հարկավոր է ուղարկել Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցության կենտրոնական գրասենյակ՝ Երեւան, Կորյունի 19ա, 3-րդ հարկ, կամ «Ազգ» օրաթերթի խմբագրատուն՝ Երեւան, Հանրապետության 47, 3-րդ հարկ, տնօրինությանը: ՀՀ-ի մարզերի գործարարները կարող են դիմել ՀՌԱԿ տեղական կառույցներին.

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ք. Գյումրի	Փիլոյան Անտոն	041-3-05-76
		2-36-28
	Գրիգորյան Նորիկ	3-28-57
ք. Արթիկ	Պետոյան Մերուժան	0-44 5-24-85, 5-44-00 բն.

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ք. Եղվարդ «Նաիրի»	Կարապետյան Հրաչյա	57-51-94
ք. Հրազդան	Մարգարյան Կարեն	0-23 2-33-66 բն.
		6-32-61 գր.
գ. Առամուս	Ստեփանյան Հռահաս	09-41-75-41
ք. Չարենցավան «Չարենցավան-1»	Ուղումյան Ատոմ	026-4-23-93
«Չարենցավան-2»	Աղասյան Վլադիսլավ	026-4-26-14

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ք. Գորիս	Ստեփանյան Էդիկ	084-2-05-25 բն.
ք. Սիսիան	Ավագյան Լեւոն	0-830 43-26 բն., 27-72 գր.
ք. Կապան	Հարությունյան Նորայր	085 6-37-81, 6-84-23,
		6-48-43

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ք. Վանաձոր	Հարոյան Ֆերդինանդ	051-5-97-57 բն., 4-29-67 գր.
ք. Ալավերդի	Թովմասյան Արա	053-2-24-69,
		2-32-01
ք. Ստեփանավան	Մարտիրոսյան Վոլոդյա	056-2-21-39, 2-26-30 բն.
գ. Տաշիր	Պետրոսյան Արտակ	0-54 2-22-11

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

գ. Մալիշկա	Մարգարյան Արմեն	081-95-820

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ք. Արմավիր	Արտակյան Գրիշա	037-6-20-41, 5-06-77
ք. Մեծամոր	Եղիշյան Արտեմ	037-3-37-57 բն.
		3-25-08 գր.

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

ք. Իջեւան	Հակոբջանյան Հովիկ	063-3-42-72 բն., 3-61-77,
3-54-22 գր.		
ք. Նոյեմբերյան	Մարգարյան Սիրամ	066-2-23-04
ք. Դիլիջան	Եսայան Էլֆիկ	0-68-55-35, 26-02
գ. Կողբ	Անանյան Սեդրակ	6-21-23, 6-24-67

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

	Սինասյան Սամվել	9-36-36 բն.
	Արման	035-2-05-77, 2-45-11

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ

ք. Ապարակ	Գետոյան Հայրենուհի	032-3-64-75

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ք. Սեւան	Խալաֆյան Նորիկ	061-2-32-72

Ուշադրություն

Բիզնես-առաջարկները հարկավոր է ներկայացնել անգլերեն լեզվով, 2-3 կոմպյուտերային էջերի սահմաններում, դիսկետով:

☎ 52 93 53

Ներկայացրեք ափխարհին Ձեր հնարավորությունները
Մե՛ր միջոցով

Նոր առաջարկություն

«Ազգ»-ի սիրելի ընթերցող,

Այսուհետեւ Դուք կարող եք «Ազգ» թերթը ստանալ ամեն օր առավոտյան, Ձեր ցանկացած վայրում՝ բնակարանում, ափխատավայրում կամ գրասենյակում:

Պարզապես զանգահարեք 52 93 53, եւ մեր գործակալը կայցելի Ձեզ:

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բաղրամյանց 70ա Գրանցման թիվ 65. Դասիչ 69150. Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 31. 10. 2002 Գինը՝ 100 դրամ